ԿՈԴ
050.0368 Ա.18.11.02

18 նոյեմբերի 2002 թվականի թիվ 368 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
2002 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲԱՆԲԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, ղեկավարվելով նույն օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի երրորդ եռամսյակի բանբերը (կցվում է):
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի աշխատակազմին՝ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի երրորդ եռամսյակի բանբերի հրատարակումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տ. Սարգսյան**

2002 թ. դեկտեմբերի …
Երևան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Մակրոտնտեսական իրավիճակը ..... 3

Փոխհարաբերությունները պետբյուջեի հետ ..... 9

Արտաքին հատված ..... 12

Դրամավարկային քաղաքականություն ..... 15

Ֆինանսական շուկա ..... 25

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները ..... 30

Վճարահաշվարկային հարաբերություններ ..... 34

Մակրոտնտեսական ցուցանիշները 2002 թ. հունվար – սեպտեմբերին ..... 39

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ..... 48

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ա. Սարգսյան*

Սղաճի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկի (FAN CHART) կառուցումը և մեկնաբանությունը ..... 53


# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2002 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում մակրոտնտեսական իրավիճակը կտրուկ փոփոխություններ չի կրել. հիմնականում շարունակվել են տնտեսական զարգացման առաջին կիսամյակի միտումները:

Տարվա առաջին կեսի արդյունքները ամփոփելուց հետո պարզ դարձավ, որ 2002 թվականին տնտեսական աճը նախատեսվածից բարձր կլինի: Չնայած այն հանգամանքին, որ ամբողջական պահանջարկը, ըստ ինն ամիսների արդյունքների, ծրագրվածի շրջանակներում էր, տնտեսական աճը կազմել է 11%՝ ծրագրված 6.9%-ի փոխարեն՝ պայմանավորված ամբողջական առաջարկի աճով: Տարեսկզբից արձանագրվել է տնտեսական աճի տեմպին մոտ արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների աճի տեմպ: Հատկանշական է, որ մինչև 2002 թվականը, որպես կանոն, տնտեսական աճի տեմպը գերազանցել է արդյունաբերական արտադրանքի ծավալների աճի տեմպը: Արդյունաբերության աճի տեմպերի հարաբերական բարձր մակարդակ գրանցվել է միայն 1999 թվականին: Բնակլիմայական գործոնով պայմանավորված՝ երրորդ եռամսյակում է թողարկվել գյուղատնտեսական մթերքների զգալի մասը, որն իր ազդեցությունն է ունեցել ինչպես տնտեսական աճի արագացման, այնպես էլ սեզոնային դեֆլյացիայի խորացման վրա: Ճյուղային զարգացումների առումով, հարկ է ընդգծել շինարարության ծավալների աննախադեպ աճը, որի զգալի մասը Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին էր: Հունվար – սեպտեմբերին պահանջարկի կառավարման տնտեսական քաղաքականության հիմնական ուղղվածությունը կարելի է որակել որպես առաջարկի բարձր աճի պայմաններում՝ ոչ բավարար ընդլայնողական: Ամբողջական առաջարկի՝ ծրագրվածի համեմատ բավականին բարձր աճի պայմաններում իրականացված դրամավարկային քաղաքականությունը հիմնականում ծրագրվածի շրջանակներում էր: Ինչ վերաբերում է հարկաբյուջետային քաղաքականությանը, ապա արտաքին ֆինանսավորման հետաձգումը հանգեցրեց ծախսերի թերակատարման, որը, իր հերթին, խոչընդոտեց ամբողջական պահանջարկի ընդլայնումը:

**ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ**

Համաձայն դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ առաջին ինն ամիսներին նախատեսվում էր ներքին պահանջարկի 8%-ով աճ: Եվ չնայած երրորդ եռամսյակում ներքին պահանջարկի աճը գերազանցել է ծրագրված մակարդակը, այդուհանդերձ, ինն ամիսների կուտակային աճը կազմել է ընդամենը 7.2%:




***ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՈՒՄԸ*** 2002 թվականի հունվար – սեպտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական արտահայտությամբ աճել է 5.9%-ով՝ ծրագրված 5.3%-ի փոխարեն: Իսկ եռամսյակային աճը գերազանցել է ծրագրված մակարդակը և նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ կազմել 6.8%: Ակներև է, որ ինն ամիսների արդյունքում ծրագրային մակարդակի գերազանցումը

հիմնականում տեղի է ունեցել երրորդ եռամսյակի հաշվին: Դա առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ երրորդ եռամսյակում տնտեսական աճը տեղի է ունեցել եկամուտների առավել հավասարաչափ բաշխում ապահովող՝ շինարարության և գյուղատնտեսության ոլորտների թողարկման ծավալների աճի հաշվին: Երեք եռամսյակների արդյունքներով մասնավոր սպառման աճի գերազանցումը ծրագրային ցուցանիշից օրինաչափ է, քանի որ ՀՆԱ փաստացի աճը նույնպես գերազանցել է ծրագրային ցուցանիշը: Դեռ ավելին, չնայած մասնավոր սպառման աճին, ՀՆԱ առաջանցիկ իրական աճի պայմաններում, ըստ ինն ամիսների արդյունքների, մասնավոր սպառման կշիռը ՀՆԱ-ում նվազել է:

**Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ,%)**

| Ցուցանիշներ[1] | 2002 թ. հունվար – սեպտեմբերը 2001 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (փաստացի) | 2002 թ. հունվար – սեպտեմբերը 2001 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (ծրագրային) |
|---|---|---|
| Իրական ՀՆԱ | 10.9 | 6.9 |
| Ներքին պահանջարկ | 7.2 | 8.0 |
| Սպառում | 6.2 | 5.6 |
| Պետական | 8.6 | 9.3 |
| Մասնավոր | 5.9 | 5.3 |
| Համախառն ներդրումներ | 13.4 | 24.8 |
| Պետական | 50.0 | 129.5 |
| Մասնավոր | 4.7 | 3.1 |
| Ներմուծում | 3.1 | 4.7 |
| Արտահանում | 21.0 | 5.4 |

***ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ*** աճը 2002 թ. հունվար – սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ (իրական արտահայտությամբ), կազմել է 13.4%՝ ծրագրված 24.8%-ի փոխարեն: Իսկ երրորդ եռամսյակի արդյունքներով (2001 թ. նույն եռամսյակի համեմատ)՝ վերջինիս աճը կազմել է 3.7%՝ ծրագրված 11.9%-ի փոխարեն:

Համախառն ներդրումների՝ առաջին ինն ամիսների փաստացի ցուցանիշի 11.4 տոկոսային կետով շեղումը ծրագրով նախատեսվածից հիմնականում հետևանք է բյուջեի կապիտալ ծախսերի թերի կատարման՝ պայմանավորված արտաքին աղբյուրներից ֆինանսական միջոցների թերստացմամբ. ծրագրով նախատեսված 50.6 մլրդ դրամի փոխարեն ստացվել է ընդամենը 34.7 մլրդ դրամ:

***ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄ:*** Չնայած ընթացիկ տարում բյուջետային գործընթացը բավականին բարելավվել է, այնուհանդերձ պետական սպառման փաստացի ծավալները, ըստ ինն ամիսների արդյունքների, զիջել են ծրագրային ցուցանիշները, որը և որոշակիորեն պայմանավորել է ներքին պահանջարկի՝ ծրագրվածից ցածր մակարդակը: 2002 թ. հունվար – սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պետական սպառման ծավալներն աճել են 8.6%-ով, մինչդեռ, ըստ ծրագրի, պետք է աճեին 9.3%-ով: Պետական սպառման՝ ծրագրայինից 0.7 տոկոսային կետով շեղումը հիմնականում հետևանք է ապրանքների և ծառայությունների գնման ծախսերի մոտ կիսով չափ՝ 22 մլրդ դրամով թերի կատարման:

Միայն երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ, պետական սպառման աճը կազմել է -0.3%, մինչդեռ նախատեսված էր 28%:

***ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ:*** Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնման պայմաններում կարելի է օրինաչափ համարել տնտեսական աճին համընթաց արտաքին ապրանքաշրջանառության աճը: Ավելին, եթե տնտեսական աճը իր կառուցվածքային բնույթով դրսևորում է երկարաժամկետ միտումներ, ապա օրինաչափ կարելի է համարել նաև արտաքին հաշվեկշռվածության բարելավումը: 2002 թ. հունվար – սեպտեմբերին ապրանքների և ծառայությունների արտահանման աճը գերազանցել է ծրագրային ցուցանիշները. արտահանման աճը կազմել է 21%՝ ծրագրված 5.4%-ի փոխարեն, իսկ ներմուծմանը՝ 3.1%՝ ծրագրված 4.7%-ի փոխարեն: Արտահանման և ներմուծման նման աճը հիմնականում պայմանավորված է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի հումքի ներմուծման և դրանց գծով պատրաստի արտադրանքի արտահանման աճով: Առաջին ինն ամիսների ընթացքում ներմուծման և արտահանման ծավալների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ ոչ սպառողական ապրանքների, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ արձանագրվող տնտեսական զարգացումները դրսևորում են երկարաժամկետ միտումներ:

[1] *ՀՀ ԿԲ գնահատումներով:*

**ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՌԱՋԱՐԿ** [2]

***ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ:*** Դեռևս տարեսկզբից արձանագրվել է արդյունաբերական ընդհանուր արտադրանքի բավականին բարձր իրական աճի տեմպ: Ակնկալվում էր, որ այն կպահպանվի ամբողջ տարվա ընթացքում, ինչը և տեղի ունեցավ նաև հաշվետու ժամանակահատվածում: Ըստ 2002 թվականի առաջին երեք եռամսյակների արդյունքների՝ արդյունաբերության աճը կազմել է 11% (առաց էներգահամակարգի՝ 23.1%): Տարվա համար հատկանշական է դառնում, որ ճյուղի աճի տեմպը մոտ է ՀՆԱ աճին, ինչը իր հերթին նշանակում է, որ ճյուղի զարգացման տեմպերը չեն զիջում ընդհանուր տնտեսական զարգացումներին (ինչը չի կարելի ասել վերջին մի քանի տարիների համար):

Հունվար – սեպտեմբերին առավել հստակ են ուրվագծվել ճյուղի կառուցվածքային զարգացումների միտումները: Ինչպես նախորդ եռամսյակներում, երրորդ եռամսյակում ևս, արդյունաբերական արտադրանքի ծավալների աճը հիմնականում տեղի է ունեցել վերամշակող արդյունաբերության, մասնավորապես՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրության հաշվին:

**Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար-սեպտեմբերին, %**

| Արդյունաբերության ճյուղ | Տեսակարար կշիռ* | | Իրական աճ (+) / նվազում (-) ** | |
|---|---|---|---|---|
| | 2001 | 2002 | 2001 | 2002 |
| էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում | 29.8 | 24.2 | -5.9 | -17.5 |
| Հանքագործական արդյունաբերություն | 6.9 | 8.2 | 23.7 | 5.3 |
| Մշակող արդյունաբերություն, որից՝ | 63.3 | 67.5 | 6.9 | 22.2 |
| *սննդի արդյունաբերություն* | 35.3 | 35.3 | 11 | 2.2 |
| *մետալուրգիա* | 7.7 | 9.7 | 50.9 | 28.6 |
| *ոսկերչական արտադրատեսակների արտադրություն* | 3.5 | 6.1 | -41.8 | 117.9 |
| *քիմիական արդյունաբերություն* | 3.0 | 2.0 | -3.7 | -32.9 |
| *մեքենաների և սարքավորումների արտադրություն* | 2.1 | 1.2 | 53.2 | -37.3 |
| **Ամբողջ արդյունաբերություն** | **100** | **100** | **2.3** | **9.7** |

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ:*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*

Փաստորեն, ճյուղում տեղի ունեցող զարգացումները էապես կախված են արտաքին աշխարհից, քանի որ ճյուղի թողարկման աճը ապահոված հիմնական արտադրատեսակները (մասնավորապես՝ ոսկերչական իրերը և մետալուրգիան) առավելապես արտահանվում են (ինչպես նշվել է, ամբողջ արտահանման ծավալն աճել է 21%-ով): Դա նշանակում է նաև, որ թողարկման աճը հիմնականում արտաքին պահանջարկի առկայությամբ է պայմանավորված, և ներքին պահանջարկի վրա հիմնականում կարող է ազդել ռեսուրսների նկատմամբ պահանջարկի հնարավոր աճով միայն, որը կարճաժամկետ հատվածում էական արտահայտություն չի կարող գտնել: Դա է հիմնական պատճառը, որ ճյուղի թողարկման ծավալների նմանօրինակ աճին զուգահեռ, գնային առումով (մասնավորապես սպառողական շուկայում) էական փոփոխություններ չեն արձանագրվում: Ընդհանուր առմամբ, նման զարգացումները գների վրա կարող են ազդել միայն տևական բնույթ կրելու՝ ճյուղում գործարկվող ռեսուրսների գների աճի դեպքում: Հաշվի առնելով, որ հումքը նշյալ ենթաճյուղերում ևս ներմուծվում է, կարելի է ենթադրել, որ ներքին գների վրա արդյունաբերության հետագա նմանատիպ զարգացումների ազդեցությունը դժվար թե նշանակալի լինի: Բացի այդ, տնտեսության հիմնական ճյուղերում աշխատավարձերի բացարձակ մակարդակների և դրանց աճի տեմպերի համեմատությունից նկատելի է, որ արդյունաբերությունը եկամուտների հավասարաչափ բաշխման տեսանկյունից աչքի չի ընկնում:

***ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:*** 2002 թ., ինչպես բազմիցս նշվել է ԿԲ հրապարակումներում, ապրանքային շուկայի կարճաժամկետ զարգացումների վրա էական ազդեցություն է ունեցել գյուղատնտեսական մթերքների թողարկման սեզոնայնության խախտումը: Ըստ առաջին կիսամյակի արդյունքների՝ գյուղա-

*[2] «Համախառն առաջարկ» բաժնի 2002 թ. վերաբերող ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-սեպտեմբերին» պարբերականն է: Իրական աճերը ներկայացված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:*

տնտեսական մթերքների թողարկման իրական աճը կազմել է ընդամենը 0.5%, ինչը հիմնականում պայմանավորվել է վեգետացիոն շրջանի հետաձգմամբ: Այդ իսկ պատճառով ճյուղի արտադրանքի հիմնական թողարկումը սպասվում էր երրորդ եռամսյակում՝ ինչը և տեղի ունեցավ: 2002 թվականի հունվար – սեպտեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ աճել է 2.8%-ով:

Բնականաբար, թողարկման ծավալների սեզոնայնության առավել սուր դրսևորումը չէր կարող չարտահայտվել սպառողական գների վրա, որոնք կարճաժամկետ հատվածում (մասնավորապես գյուղատնտեսական մթերքների գները) կախված են առաջարկի սեզոնային տատանումներից: Արդյունքում, չնայած ամբողջական պահանջարկի բավարար մակարդակին, եռամսյակի ավարտին գրանցվել է գյուղատնտեսական մթերքների գների դեֆլյացիա՝ հանգեցնելով ՍԳԻ կտրուկ անկման, որն ամենախորն էր վերջին տարիներին արձանագրվածներից:

***ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:*** Ընթացիկ տարում տնտեսության ճյուղային զարգացումների ընդհանուր բարձր տեմպերի համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի կապիտալ շինարարությունը: Առաջին ինն ամիսներին ճյուղի թողարկման ծավալներն աճել են 37.9[3]%-ով, ինչի արդյունքում ճյուղի մասնակցությունը ՀՆԱ իրական աճին ամենամեծն է (3.5%): Կապիտալ ֆինանսավորման ծավալների աճին զգալիորեն նպաստել են Լիճսի հիմնադրամի միջոցներով իրականացված աշխատանքները (մասնակցությունը շինարարության ոլորտի իրական աճին կազմել է 10.4 տոկոսային կետ)՝ 2002 թվականի առաջին ինն ամիսներին ընդհանուր առմամբ կազմելով 17.662 մլրդ դրամ: Սակայն հարկ է նշել, որ բավականին մեծ ծավալներ են կազմել բնակարանային տնտեսություններում իրականացված շինարարական աշխատանքները: Եթե դրա հետ մեկտեղ հաշվի առնենք նաև տարվա ընթացքում անշարժ գույքի գների կտրուկ աճը[4] և այն, որ այդ գործընթացը ավարտված համարելը թերևս վաղ է, ապա պարզ կդառնա, որ շինարարությունում արձանագրվող աճը ոչ միայն ինքնավար գործոնների հաշվին է (ինչպես օրինակ՝ Լիճսի հիմնադրամի դեպքում), այլև արտահայտում է տնտեսությունում ընթացող երկարաժամկետ դրական կառուցվածքային տեղաշարժեր և հիմք է տալիս ակնկալել, որ այս զարգացումները կշարունակվեն նաև հաջորդ տարի:

Հաշվի առնելով ճյուղի աշխատավարձերի համեմատական բարձր մակարդակը՝ կարելի է ենթադրել, որ այս ճյուղի թողարկման միավոր աճը, համեմատած արդյունաբերության կամ ծառայության ոլորտների հետ, առավել չափով կարող է նպաստել եկամուտների հավասարաչափ բաշխմանը: Դա նշանակում է նաև, որ շինարարության հաշվին տնտեսական կամ իրական եկամուտների աճը կարող է հանգեցնել սպառողական ապրանքների նկատմամբ համեմատաբար մեծ պահանջարկի, որն էլ իր ազդեցությունը կունենա գների վրա: Հանրապետությունում կատարված տարածքային դիտարկումների արդյունքներով՝ ամենացածր դեֆլյացիան գրանցվել է Գյումրի քաղաքում՝ -3.1%, որտեղ զբաղվածների գերակշիռ մասն աշխատում է շինարարությունում, և հանրապետությունում իրականացված կապիտալ շինարարության զգալի մասը բաժին է ընկնում աղետի գոտուն:

***ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ:*** Չնայած ՀՆԱ առաջանցիկ աճի տեմպերին՝ ծառայությունների ոլորտը դրսևորել է զարգացման նախկին միտումները: Ծառայությունների աճը 2002 թվականի առաջին ինն ամիսներին կազմել է 7.7%: Սակայն ՀՆԱ-ում ճյուղի ունեցած մեծ կշռի պայմաններում, մասնակցությունը ՀՆԱ իրական աճին կազմել է 2.5 %:

## ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Համաձայն 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի նկատմամբ, նախատեսվում էր ապահովել ժամանակահատվածի վերջի դրությամբ -3.3% և միջին՝ -2.7% սղաճ:


Սակայն ինչպես նշվել է, գյուղատնտեսության սեզոնային դրսևորումները այս տարի առավել սուր արտահայտվեցին: Հուլիս և օգոստոս ամիսներին արձանագրվել է, համապատասխանաբար՝ 5% և 3% դեֆլյացիա: Դեֆլյացիոն զարգացումները պահպանվել են նաև սեպտեմբերին և եռամսյակի վերջի դրությամբ, երկրորդ եռամսյակի նկատմամբ գրանցվել է 8.4% դեֆլյացիա՝ նախորդ տարվա 4.4%-ի փոխարեն, իսկ սղաճի ինն ամիսների միջին ցուցանիշը կազմել է 1%՝ նախորդ տարվա 3.3%-ի փոխարեն: ՍԳԻ զամբյուղը կազմող հիմնական ապրանքախմբերի գների համեմատական դիտարկումը ևս վկայում է, որ գների արձանագրված անկումը որոշակիորեն պայմանավորվել է գյուղատնտեսության խիստ սեզոնային գործոնով:

*[3] Շինմոնտաժային աշխատանքների աճը:*
*[4] Անշարժ գույքի գների վերաբերյալ տեղեկատվությունը փորձագիտական գնահատում է:*

| 2002 թ. *(2001 թ. դեկտ. =100)* | ՍԳԻ | Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | Ոչ պարենային ապրանքներ | Վճարովի ծառայություններ |
|---|---|---|---|---|
| Հունվար | 102.2 | 103.3 | 99.7 | 100.0 |
| Փետրվար | 101.5 | 102.3 | 99.5 | 100.0 |
| Մարտ | 100.9 | 101.3 | 99.4 | 100.4 |
| Ապրիլ | 103.4 | 104.8 | 100.1 | 100.6 |
| Մայիս | 105.2 | 107.2 | 100.5 | 100.9 |
| Հունիս | 104.6 | 106.2 | 100.6 | 101.5 |
| I կիսամյակ | 104.6 | 106.2 | 100.6 | 101.5 |
| Հուլիս | 99.4 | 98.7 | 100.8 | 100.0 |
| Օգոստոս | 96.4 | 94.5 | 100.1 | 99.8 |
| Սեպտեմբեր | 95.8 | 93.7 | 100.1 | 99.8 |

Եռամսյակի ընթացքում ՍԳԻ անկումը հիմնականում տեղի է ունեցել պարենային ապրանքների գների 6.3%-ով անկման հաշվին, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 5.3 տոկոսային կետով: Հուլիս-օգոստոսին պարենային ապրանքների գների անկումը մեծամասամբ պայմանավորվել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների 51.9%-ով, մրգի և ձվի գների, համապատասխանաբար՝ 32.1%-ով և 22.7%-ով անկմամբ:

Ոչ պարենային ապրանքների շուկայում 2002 թ. սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 0.1% սղաճ, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 0.8% դեֆլյացիա: Վերջինս հիմնականում հետևանք էր բենզինի և ոսկերչական ապրանքների գների համապատասխանաբար 5.2%-ով և 2.7%-ով աճի:





Վճարովի ծառայությունների գների անկումը անհամեմատ փոքր է եղել. սղաճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կազմել է -0.2%՝ պայմանավորված կենցաղային, բուժսպասարկման և տրանսպորտային ծառայությունների սակագների իջեցմամբ:

Ինչպես ցույց են տալիս բնականոն սղաճի հաշվարկները, երրորդ եռամսյակի վերջին գրանցված (2001 թ. դեկտեմբերի նկատմամբ) 4.2% դեֆլյացիան սեզոնային գյուղատնտեսական ապրանքների գների, ինչպես նաև բնականոն սղաճի նվազման հետևանք է: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում սեզոնային գյուղատնտեսական ապրանքների գները և բնականոն սղաճը ապահովել են դեֆլյացիայի համապատասխանաբար 1.66 և 2.69 տոկոսային կետերը, իսկ պետության կողմից կարգավորվող գների աճը՝ -0.16 տոկոսային կետը: Բնականոն սղաճի 0.4 տոկոսային կետով անկումը ներմուծված[5] սղաճի հաշվին է եղել:

Այլ է պատկերը տնտեսությունում թողարկվող արտադրանքի գների ազդեցության առումով: 2002 թվականի հունվար – սեպտեմբերին ՀՆԱ դեֆլյատորի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 2.5% և 1.4 տոկոսային կետով գերազանցել է ՍԳԻ համապատասխան ցուցանիշը: Դրան նպաստել են արդյունաբերության արտադրանքի գների դեֆլյատորի 3%-ով աճը, ինչպես նաև կապիտալ շինարարության և գյուղմթերքների իրացման գների ինդեքսների աճերը, համապատասխանաբար՝ 4.7%-ով և 3.6%-ով: Փաստորեն, ՀՆԱ դեֆլյատորի փոփոխությունը համեմատաբար մոտ է մի-

[5] *Արտահայտում է ՍԳԻ զամբյուղի՝ ներմուծված ապրանքների գների փոփոխությունը:*

ջին սղաճի ցուցանիշին: Իսկ 1.4 տոկոսային կետով գերազանցումը հիմնականում հետևանք է այն բանի, որ արդյունաբերական արտադրանքի մի զգալի մասը (որոնց գների փոփոխությունը արտահայտվում է դեֆլյատորում) արտահանվում է: Ի լրումն դրա, կապիտալ շինարարության գների փոփոխության մասնակցությունը ՀՆԱ դեֆլյատորի և ՍԳԻ-ի ձևավորմանը ևս համարժեք չէ: Այլ կերպ ասած՝ ինն ամիսների ընթացքում ոչ սպառողական ապրանքների և ծառայությունների գների աճը գերազանցել է սպառողական ապրանքներինը:




## ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱ

2002 թվականի առաջին ինն ամիսներին աշխատուժի շուկայում էական տեղաշարժեր չեն նկատվել: Գործազրկության մակարդակը (զբաղվածության տարածքային կենտրոնում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությունը) երրորդ եռամսյակի ընթացքում տատանվել է առաջին կիսամյակում արձանագրված մակարդակի շրջակայքում և կազմել 9.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.6%-ով:

Երրորդ եռամսյակում զբաղվածների միջին անվանական աշխատավարձը, նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ, աճել է 10.7%-ով և կազմել 25709 դրամ: Միևնույն ժամանակ, բնակչության դրամական եկամուտների և ծախսերի աճի տեմպերը 2001 թ. առաջին ինն ամիսների համեմատ կազմել են, համապատասխանաբար՝ 12.5% և 10.9%[6]:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ աշխատավարձերի ամենացածր մակարդակը պահպանվել է մշակույթի, կրթության, արվեստի ոլորտներում, իսկ ամենաբարձրը՝ վարկավորման, կապի, շինարարության համակարգերում (նշված երկու խմբերի միջին անվանական աշխատավարձերի ստանդարտ շեղումը մոտ 32000 դրամ է):

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը բանվորական մասնագիտություններինն է. ընդհանուր պահանջարկի մեջ՝ 79.7%:


[6] *Ծախսերի և եկամուտների աճի տեմպերի տարբերությունը բավարար չէ ենթադրելու, որ առկա է խնայողությունների աճ:*

# ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՀԵՏ

ՀՀ պետբյուջեի հետ փոխհարաբերությունների բնագավառում, ի տարբերություն նախորդ երկու տարիներին դրսևորված միտումների, 2002 թվականի երեք եռամսյակների ընթացքում հաջողվեց ապահովել եռամսյակային հարկային մուտքերի նախանշված մակարդակները: Իսկ պետական ծախսերի թերի կատարումը և ծրագրային ցուցանիշից պակասուրդի շեղումը պայմանավորված էին արտաքին միջոցների՝ նախատեսվածից պակաս ներհոսքով:

2002 թվականի հունվար-սեպտեմբերին ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության առումով, ՀՀ կենտրոնական բանկի գնահատումներում ներառված էր Լինսի հիմնադրամից 30.8 մլն ԱՄՆ դոլարի ստացումը, որը ներառված չէր պետական բյուջեի ծրագրում: Ինն ամիսների ընթացքում նշված միջոցների ծախսման ազդեցությունը հաշվի առնելու պարագայում, ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը՝ ըստ ազդակի ցուցանիշի, գնահատվել է -0.7% զսպողական՝ ծրագրված 1.6% ընդլայնողական ազդակի փոխարեն: Ընդ որում, եկամուտների ազդակն ունեցել է -1.0% զսպողական ազդեցություն՝ ծրագրված -0.6% զսպողականի փոխարեն, ինչը պայմանավորված էր հարկային և ոչ հարկային եկամուտների ծրագրային մակարդակների գերազանցմամբ: Ծախսերի ազդակն ունեցել է 0.03% ընդլայնողական ազդեցություն՝ ծրագրված 1.3%-ի փոխարեն, որն էլ պայմանավորված էր ծրագրվածի համեմատ 9.2 մլրդ դրամով ծախսերի թերի ֆինանսավորմամբ (որից 8.2 մլրդ դրամը հետևանք է արտաքին, իսկ 1.0 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրների հաշվին իրականացվող կապիտալ ծախսերի թերակատարման):


**2002 թ. հարկաբյուջետային ազդակների ծրագրային և փաստացի ցուցանիշները (հունվար - սեպտեմբեր)**





Ըստ ՀՀ պետբյուջեի եկամուտների տարեկան ծրագրի՝ 2002 թվականի երրորդ եռամսյակում նախատեսվել էր եկամուտների և դրամաշնորհների 55.4 մլրդ դրամ մակարդակ, որի փոխարեն ապահովվել է 56.9 մլրդ դրամ կամ ծրագրվածի 103%-ը[1]: Վերջինս ձևավորվել է հիմնականում հարկային եկամուտների և պետական տուրքի եռամսյակային ծրագրի 3.7%-ով գերակատարման (ծրագրված 50.7 մլրդ դրամի փոխարեն փաստացի հավաքագրվել է 52.6 մլրդ դրամ եկամուտ), դրամաշնորհների ծրագրային ցուցանիշի 25.3%-ով գերակատարման (ծրագրային՝ 2.6 մլրդ դրամ, փաստացի՝ 3.2 մլրդ դրամ) և ոչ հարկային և կապիտալ եկամուտների 49%-ով թերակատարման արդյունքում:

Հարկերի՝ նշված բարձր մակարդակի պայմաններում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը գերազանցել է նախորդ երկու տարիներին արձանագրված մակարդակները և ինն ամսվա արդյունքներով կազմել է 16.1%՝ նախորդ տարվա և 2000 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխանաբար՝ 13.6%-ի և 13.9%-ի փոխարեն:

[1] *Օգտագործված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ-ին տրամադրված՝ պետբյուջեի 2002 թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների փաստացի և ծրագրային ցուցանիշները:*




Հատկանշական է, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ, այս տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհներն ավելացել են 32.4%-ով, հարկեր և տուրքերը՝ 35.1 %-ով, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները նվազել են 38.9 %-ով (հիմնականում պայմանավորված ՀՀ ԿԲ շահույթի 2.0 մլրդ դրամով պակաս փոխանցմամբ) :





Չնայած պետական բյուջեի եկամտային մասի կատարման դրական դրսևորումներին՝ ինն ամիսների ընթացքում դեռևս պահպանվել են և նույնիսկ ավելի վառ դրսևորվել բյուջեի եկամուտների հավաքագրման և, դրա հետևանքով, ծախսերի կատարման տատանողական միտումները: Երրորդ եռամսյակի ընթացքում հավաքագրված հարկերի միջին ամսական մուտքերի 52.1%-ը բաժին է ընկել ամիսների վերջին հինգ օրերին՝ նախորդ տարվա 42.8%-ի փոխարեն, և կատարված ծախսերի 48.2%-ը՝ նախորդ տարվա՝ 36.6%-ի փոխարեն, իսկ ամսական հարկերի 40%-ը բաժին է ընկել ամսվա վերջին օրերին, այն պարագայում, երբ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել է 37%:

Հարկերի հավաքագրման նման անհամաչափության պայմաններում զգալի միջոցներ են կուտակվել ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում, որոնց միջին մեծությունը տարվա ինն ամիսների վերջին երեք օրերին կազմել է շուրջ 5.0 մլրդ դրամ կամ միջին ամսական հարկային եկամուտների 30%-ը, ընդ որում՝ սեպտեմբերի վերջի դրությամբ միասնական հաշիվը կազմել է 11.5 մլրդ դրամ: Տարվա ընթացքում միջոցների նման կուտակումները, ինչպես նաև բյուջեի ծախսումներում կանխիկ շրջանառությամբ իրականացվող ծախսերի մեծ տեսակարար կշռի առկայությունը, 2002 թ. ինն ամիսների ընթացքում մշտապես խնդիրներ են առաջացրել ինչպես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման, այնպես էլ բանկային իրացվելիության ցանկալի մակարդակի ապահովման

առումով: Նշված պայմաններում, բանկային իրացվելիության արդյունավետ կառավարման նպատակով, ՀՀ կենտրոնական բանկը ստիպված է եղել ակտիվացնել դրամի ներարկման գործողությունները:

2002 թվականի հունվար - սեպտեմբերին կատարվել է ծախսերի տարեկան ծրագրի 65.8%-ը, որն էլ կազմել է երեք եռամսյակների փաստացի ՀՆԱ-ի 18.9%-ը: Երրորդ եռամսյակի ընթացքում ծախսերը կազմել են ծրագրային ցուցանիշի 91 %-ը (ծրագրային՝ 63.8 մլրդ դրամ, փաստացի՝ 58.1 մլրդ դրամ), այդ թվում՝ ընթացիկ ծախսերը կատարվել են 96.5%-ով, կապիտալ ծախսերը՝ 72.6.%-ով, իսկ զուտ վարկավորումը՝ 77.7%-ով: Նշված թերակատարումները նպատակային ծրագրերով նախատեսված արտաքին ֆինանսավորման միջոցների չստացման և Գանձապետական միասնական հաշվում պետբյուջեի մուտքերի վերոնշյալ կուտակումների հետևանք են: Եռամսյակի ընթացքում ՀՀ պետբյուջեի ընդհանուր ծախսերի մակարդակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 2.4%-ով, ընդ որում՝ ընթացիկ ծախսերի մակարդակն աճել է 7.1%-ով, իսկ կապիտալ ծախսերինը և զուտ վարկավորմանը՝ նվազել 28.1%-ով:




Տարվա իննամիսների արդյունքում ձևավորված բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ 1.0%-ը՝ նախորդ տարվա 3%-ի փոխարեն: Բյուջեի կանխիկ պակասուրդը երրորդ եռամսյակում կազմել է ծրագրված մակարդակի 23.1%-ը, իսկ իննամսվա կտրվածքով՝ ծրագրային ցուցանիշի 34.8 %-ը: Եռամսյակի ընթացքում պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների զուտ մեծությունը կազմել է ծրագրայինի 65%-ը: Ընդ որում, ծրագրված արտաքին վարկի 12.3 մլրդ դրամի փոխարեն փաստացի ստացվել է 6.6 մլրդ դրամ, իսկ նախատեսված 2.7 մլրդ դրամ արտաքին պարտքի մարումից 2.3 մլրդ դրամը հետաձգվել է: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են –3.8 մլրդ դրամ, որից՝ արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերը՝ -0.7 մլրդ դրամ, սեփականաշնորհման միջոցների զուտ օգտագործումը՝ 1.6 մլրդ դրամ, իսկ այլ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը՝ –4.8 մլրդ դրամ (պայմանավորված միասնական հաշվի խոշոր կուտակումներով): Ըստ իննամսյակների արդյունքների՝ պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերը կազմել են 1.3 մլրդ դրամ (ծրագրայինին համապատասխան):

2002 թ. չորրորդ եռամսյակի ճշգրտված ծրագրի, հետևաբար և՝ բյուջեի տարեկան ծրագրի կատարման առումով, ռիսկը հիմնականում կապված է ԿԲՎ-ի ստացման հետ, քանի որ տարեսկզբից շարունակվում են պետբյուջեի եկամուտների հավաքագրման և ծրագրային ցուցանիշների ապահովման դրական միտումները:

2002 թվականի հունվար - սեպտեմբերին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 106.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով 21.8%-ով (29.6 մլն ԱՄՆ դոլարով): Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 6.9% ( 2001թ.՝ 9.7%): Ընթացիկ հաշվի լավացումը գերազանցապես պայմանավորված էր առևտրային հաշվեկշռով: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների գծով ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումներ չեն արձանագրվել: Ընդ որում՝ դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված էր ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի 8.0% մակարդակ:

Ներմուծման նկատմամբ արտահանման բարձր աճի պայմաններում, հունվար-սեպտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կրճատվել է ավելի քան 23.0%-ով (68.2 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 228.1 մլն ԱՄՆ դոլար:


Ապրանքների արտահանումը (կրեդիտ) հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 43.6%-ով (109.9 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 362.0 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը զգալիորեն պայմանավորվել է դրանում մեծ տեսակարար կշիռ կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 98.1 մլն ԱՄՆ դոլարով և 5.9 մլն ԱՄՆ դոլարով աճով: Մյուս հոդվածների գծով նկատելի էր «Սարքեր և ապարատներ» ու «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճ, համապատասխանաբար՝ 7.1 մլն ԱՄՆ դոլարով և 3.7 մլն ԱՄՆ դոլարով: Միևնույն ժամանակ, որոշ խոշոր ապրանքախմբերի արտահանման ծավալները կրճատվել են, օրինակ՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Պլաստմասսա և դրանցից պատրաստված իրեր» ապանքախմբերը: Ընդ որում՝ ծրագրով նախատեսված էր արտահանման 17.8%-ով աճ, իսկ ծրագրային և փաստացի ցուցանիշների զգալի տարբերության պատճառը «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների զգալի գերազանցումն էր կանխատեսվածից:


Ներմուծումը (դեբետ) 2002թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 7.6%-ով (41.7 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 590.1 մլն ԱՄՆ դոլար՝ կրկին ի հաշիվ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի: Բացի այդ, աճել են նաև «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները (համապատասխանաբար՝ 64.4 մլն ԱՄՆ դոլարով, 13.8 մլն ԱՄՆ դոլարով, 8.5 մլն ԱՄՆ դոլարով): Դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել էր ներմուծման 4.1%-ով աճ: Ծրագրվածից փաստացի ցուցանիշների էական շեղումներ են արձանագրվել հատկապես «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի մասով՝ աճման ուղղությամբ (շեղումը կազմել է մոտ 41.1 մլն ԱՄՆ դոլար), իսկ «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի մասով՝ նվազման ուղղությամբ (շեղումը կազմել է 22.7 մլն ԱՄՆ դոլար): Կրճատվել են նաև «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ներմուծման ծավալները:

Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ արտահանման աճը կազմել է 8.6%, իսկ ներմուծումը կրճատվել է 2.5%-ով:

Ծառայությունների մասով հարկ է առանձնացնել զբոսաշրջիկների թվաքանակի աճը: Հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արձանագրվել է մոտ 12%-ով աճ: Դա էլ իր հերթին հանգեցրել է արտարժույթի առաջարկի ավելացմանը ներքին արժութային շուկայում, ինչը հանդիսացել է փոխարժեքի արժեքավորման պատճառներից մեկը:

Պահպանելով դեռևս առաջին կիսամյակում նկատված միտումները՝ երրորդ եռամսյակի ընթացքում կրճատվել են կապիտալ և ֆինանսական հաշվով գրանցված ֆինանսական զուտ հոսքերը՝ ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի կրճատման, այնպես էլ առևտրային բանկերի արտարժութային ակտիվների աճի հետևանքով: Հունվար - սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, օտարերկրյա ուղղակի ներդրումները կրճատվել են 5.8 մլն դոլարով, իսկ առևտրային բանկերի ԶԱԱ-ը աճել են 46.1 մլն ԱՄՆ դոլարով:





Ամբողջ երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական հաշվարկային փոխարժեքը կայուն տեմպերով արժեքավորվել է՝ բացառությամբ վերջին տասնօրյակի: Երրորդ եռամսյակն առանձնացել է դրամի նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկով՝ պայմանավորված տնտեսական բարձր ակտիվությամբ (տե՛ս «Դրամավարկային քաղաքականություն» հատվածը): Մյուս կողմից, կապիտալ ներհոսքի հետևանքով ներքին շուկայում աճել է արտարժույթի առաջարկը՝ արժեքավորման ուղղությամբ ճնշում առաջացնելով փոխարժեքի վրա: Փողի բազայի կառավարման նպատակով երրորդ եռամսյակում Կենտրոնական բանկը արտարժութային շուկայում վաճառել է 3 մլն ԱՄՆ դոլար՝ ստերիլացնելով իրացվելիության աճը, որը պայմանավորված էր պետական բյուջեի՝ Լինսի հիմնադրամից ստացված միջոցների ծախսմամբ: Իսկ արդեն եռամսյակի վերջին, փողի բազայի ավելացման նպատակով, Կենտրոնական բանկն իրականացրել է արտարժույթի առքի գործառնություններ: Եռամսյակի ընթացքում զուտ մասնակցությունը կազմել է 5.4 մլն ԱՄՆ դոլարի առք: Արդյունքում՝ հունվար-սեպտեմբերին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 569.99՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 3.2%-ով:

Կենտրոնական բանկի ՁԱԱ-ը ինն ամիսների ընթացքում աճել են 18.1 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 169.2 մլն ԱՄՆ դոլար: Կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվների 36.9 մլն ԱՄՆ դոլարը ուղղվել է արտաքին պետական պարտքի սպասարկմանը, միջբանկային արտարժույթի շուկայում Կենտրոնական բանկի կողմից իրականացվել է զուտ 14.5 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի վաճառք: Մյուս կողմից, Լինսի հիմնադրամի և այլ դրամաշնորհների ստացման արդյունքում, համախառն պահուստները համալրվել են 56.7 մլն ԱՄՆ դոլարով (ներառված է նաև ԿՎԲ-4 վարկի մասնաբաժինը): Այլ գործառնությունների հաշվին պահուստները համալրվել են 16.5 մլն ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2002 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեզրկվել է 9.8%-ով՝ ծրագրով նախատեսված 5.8%-ի փոխարեն:

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ իրական փոխարժեքն արժեզրկվել է 9.2%-ով: Արժեզրկման հիմնական պատճառը Հայաստանի սղաճի[1] համեմատ (1.1%) գործընկեր երկրների միջին կշռված սղաճի բարձր մակարդակն էր (12.5%): Սղաճի բարձր մակարդակ է գրանցվել Ռուսաստանում (15.8%), Իրանում (14%), Թուրքիայում (51%): Իսկ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքն արժեքավորվել է 1.6%-ով: 2002թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ՀՀ դրամը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 6.8%-ով:

**ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը (աճը նշանակում է արժեքավորում)**




[1] *Հաշվարկված է 2002 թվականի հունվար-սեպտեմբերի միջինը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինի նկատմամբ:*

## Դրամավարկային քաղաքականության երրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

Ըստ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի եռամսյակային համամասնությունների, երրորդ եռամսյակում ևս, տնտեսական ակտիվության սեզոնային աճին համահունչ, ԿԲ-ն ծրագրել էր ընդլայնողական դրամավարկային քաղաքականության սցենար: Այն նախատեսվում էր իրագործել փողի բազան և փողի զանգվածը համապատասխանաբար 4.9%-ով (3.8 մլրդ դրամ) և 6%-ով (10.7 մլրդ դրամ) ավելացնելու միջոցով, որի արդյունքում նույնքան՝ 6%-ով, կամ 5.0 մլրդ դրամով պետք է աճեր նաև փողի զանգվածի դրամային մասը:

Առաջին կիսամյակի արդյունքներով արձանագրվել էր ծրագրային ցուցանիշից սղաճի զգալի գերազանցում, ինչը ենթադրում էր, որ երրորդ եռամսյակում ԿԲ-ն փողի բազան պետք է կառավարեր տատանումների միջակայքի ներքին սահմանին՝ 80.5 մլրդ դրամին մոտ: Իսկ քանի որ նախորդ եռամսյակն ավարտվել էր փողի բազայի՝ տատանումների թույլատրելի միջակայքի ներքին սահմանից շուրջ 4.0 մլրդ դրամով ցածր մակարդակով (74.4 մլրդ դրամ), ապա այն եռամսյակի ընթացքում պետք է աճեր 6.1 մլրդ դրամով կամ 8.2%-ով:

Այս եռամսյակում ևս հիմնականում ակնկալվում էին փողի բազայի աճի ուղղությամբ ինքնավար հոսքեր՝ 12.5 մլրդ դրամի արտաքին ֆինանսական ներհոսք (Լինսի հիմնադրամի դրամաշնորհի եռամսյակի մասնաբաժինն ու Վերակառուցման վարկերի բանկի (KfW) վարկը) և Գանձապետարանի միասնական հաշվից 4.3 մլրդ դրամի[1] ծախսում: Միաժամանակ, իրականացվելու էր 6.0 մլրդ դրամի արտաքին պետական պարտքի սպասարկում: Նշված հոսքերի պայմաններում ենթադրվում էր, որ նախատեսվածից ավելի իրացվելիության աճ թույլ չտալու նպատակով ԿԲ-ն եռամսյակի ընթացքում պետք է կիրառեր ստերիլացնող դրամավարկային գործիքներ, որոնցից, հաշվի առնելով արտարժութային զգալի ներհոսքը, նախապատվությունը տրվելու էր արտարժույթի վաճառքին:

## Դրամավարկային քաղաքականության զարգացումները

**ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ**

Երրորդ եռամսյակում արձանագրվել է համախառն պահանջարկի աննախադեպ մեծ աճ, համապատասխանաբար զգալիորեն աճել է նաև փողի պահանջարկը: Դրա վառ ապացույցն է այդ ժամանակահատվածում փողի ագրեգատների ձևավորված փաստացի աճը, որը էապես գերազանցել է ակնկալվող ցուցանիշները:

**Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ[2]**

*(ըստ 2002 թ. ֆինանսական ծրագրի)*

| Ցուցանիշներ | III եռամսյակ | |
|---|---|---|
| | *Ծրագրային* | *Փաստացի* |
| Փողի զանգվածի (M2X, ժամ. վերջ) աճի տեմպը, % | 6.0 | 12.7 |
| Փողի զանգվածի (M2X, ժամ. միջին) աճի տեմպը, % | 5.0 | 8.3 |
| Փողի շրջապտույտի արագություն (ժամ. միջին) | 1.77 | 2.17 |
| Դրամային զանգվածի (M2, ժամ. վերջ) աճի տեմպը, % | 5.97 | 14.9 |
| Դրամային զանգվածի (M2, ժամ. միջին) աճի տեմպը, % | 4.7 | 7.3 |
| Դրամի շրջապտույտի արագություն (ժամ. միջին) | 3.84 | 4.13 |
| Փողի բազայի (ժամ. վերջ) աճի տեմպը, % | 4.9 | 8.1 |
| Փողի բազայի (ժամ. միջին) աճի տեմպը, % | 4.6 | 4.9 |
| Փողի բազմարկիչ (ժամ. միջին) | 2.31 | 2.12 |
| Դրամային բազմարկիչ (ժամ. միջին) | 1.07 | 1.11 |

*[1] Հաշվարկված է այն պայմաններում, երբ եռամսյակի ամիսների վերջերին միասնական հաշվի մնացորդը կազմում է 3.0 մլրդ դրամ:*

*[2] Աղյուսակում փողի և դրամի շրջապտույտի արագությունների, փողի և դրամային բազմարկիչների ծրագրված և փաստացի ցուցանիշների մեծ շեղումը մասամբ բացատրվում է նրանով, որ ծրագրված ցուցանիշները հիմնված են 30 բանկերի տվյալների վրա, իսկ փաստացի ցուցանիշներում ներառված են 22 բանկերի տվյալներ: Նույն պատճառով՝ աղյուսակում և տեքստում բացակայում են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ բերված ցուցանիշների աճի տեմպերը:*

Բացի նրանից, որ եռամսյակի ընթացքում առավելապես ապահովվել են համախառն, հետևաբար և՝ փողի պահանջարկը խթանող հիմնական ինքնավար հոսքերը (դրանք կքննարկվեն համապատասխան բաժիններում), ի հայտ են եկել նաև մի շարք չնախատեսված գործոններ, որոնք ևս նպաստել են փողի ագրեգատների ընդլայնմանը: Նախ, սեփականաշնորհման հատուկ հաշվից Կառավարությունն իրականացրել է ավելի քան 4.1 մլրդ դրամի ներքին ծախս: Ակնկալվող ժամկետից շուտ է ստացվել Հոլանդական դրամաշնորհը, որը ևս ամբողջությամբ ուղղվել է ներքին տնտեսություն: Եվ վերջապես, հուլիս-օգոստոսին գրանցված 8% դեֆլյացիայի պայմաններում, երբ անհասանելի էր դառնում գերխնդրի՝ սղաճի տարեկան 3% ցուցանիշի ապահովումը, ԿԲ կողմից ճշգրտվել են դրամավարկային քաղաքականության ուղղությունները մինչև տարեվերջ և ներարկվել իրացվելիություն՝ փողի բազան տատանումների միջակայքի վերին սահմանի շրջանում կառավարելու նպատակով: Արդյունքում՝ կիրառվել է արտարժույթի շուկայից առքի ներարկող գործիքը և սեպտեմբերի ընթացքում գնվել ավելի քան 4.9 մլրդ դրամին համարժեք արտարժույթ:


Բոլոր հոսքերով պայմանավորված՝ երրորդ եռամսյակում դրամային զանգվածն աճել է 12.4 մլրդ դրամով կամ 14.9%-ով, իսկ փողի զանգվածը՝ 21.4 մլրդ դրամով կամ 12.7%-ով: Համեմատության համար նշենք, որ բերված ցուցանիշների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում համապատասխանաբար կազմել է՝ 5.3% և 2.8%:

Փողի պահանջարկի աճի դրսևորումներն, առանց բացառության, արտացոլվել են բոլոր բաղադրատարրերում. մասնավորապես՝ նախորդ տարիների համեմատ աննախադեպ խոշոր աճ է արձանագրվել բանկային համակարգից դուրս գտնվող կանխիկի գծով՝ մոտ 7.0 մլրդ դրամ (1999 – 2001 թթ. նույն ժամանակաշրջանում այդ ցուցանիշը միջին հաշվով աճել է 4.1 մլրդ դրամով): Այս առումով ընթացիկ տարվա առաձնահատկությունն այն է, որ նախ, երրորդ եռամսյակում կանխիկի սեզոնային աճին գումարվել է այդ ժամանակահատվածում ստացված ֆինանսական մեծածավալ ներհոսքի ազդեցությունը: Մյուս կողմից, երկրորդ եռամսյակի տնտեսական բարձր աճի դրսևորումները շարունակվել են նաև երրորդում, ինչի հետևանքով պահպանվել է գործառնական (տրանսակցիոն) մեծ պահանջարկը՝ ուղեկցվելով կանխիկի հանդեպ մեծ պահանջարկի ձևավորմամբ: Եռամսյակի ընթացքում կանխիկի աճի ավելի արագ տեմպերի մասին է վկայում նաև այն փաստը, որ հունվարին ավելի քան 9.0 մլրդ դրամով նվազումից հետո, մինչև սեպտեմբերի վերջ շրջանառությունում գտնվող կանխիկը վերականգնվել և 1.4 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա վերջի մակարդակը, ինչը չի դիտվել վերը նշված տարիներին:

Նույնը կարելի է ասել նաև բանկային համակարգի ընդհանուր ավանդների միտումների վերաբերյալ: Այսպես, վերջին 3 տարիների նույն ժամանակահատվածի՝ միջին հաշվով առավելագույնը 4.6 մլրդ դրամ աճի պարագայում, ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում ավանդներն աճել են ավելի քան 15.0 մլրդ դրամով: Վերջինս մեծամասամբ բաժին է ընկել արտարժութային ավանդներին՝ 9.4 մլրդ դրամ, որի կառուցվածքում, ի տարբերություն նախորդ եռամսյակների, այս եռամսյակում աճի գերակշիռ մասն ապահովել են ժամկետային ավանդները (7.1 մլրդ դրամ): Դա բացատրվում է նրանով, որ տարեսկզբին որոշ բանկերում ծագած ֆինանսական խնդիրների հետևանքով բանկային համակարգից արտարժույթով ժամկետային միջոցների արտահոսքը, համակարգում ֆինանսական կայունության պահպանման շնորհիվ, կարճ ժամանակահատվածում կանխվել է և հետագայում արդեն դիտվել դրանց հետադարձ հոսք բանկային համակարգ:

Ավելի դանդաղ տեմպերով, սակայն անցած եռամսյակների համեմատ զգալիորեն աճել են դրամային ավանդները՝ 5.7 մլրդ դրամով, որը գրեթե հավասարաչափ է բաշխվել ցպահանջ և ժամկետային ավանդների միջև:

**Դրամով և արտարժույթով ավանդները ըստ ժամկետայնության**




Ավանդների մեծածավալ աճը ևս բացատրվում է արձանագրված բարձր տնտեսական աճով, իսկ արտարժութային ավանդների աճին էապես նպաստել են նաև արտահանման աճի բարձր տեմպերը:


Հարկ է նշել, որ, եթե նախորդ եռամսյակների համեմատ երրորդ եռամսյակն աչքի է ընկել խոշոր շարժերով, ապա, ըստ ամիսների, այդ տեսանկյունից առանձնացել է սեպտեմբերը, որի ընթացքում գրանցվել է փողի և դրամային զանգվածների ամենամեծ աճը՝ համապատասխանաբար 13.4 մլրդ և 10.1 մլրդ դրամով, այդ թվում՝ կանխիկի աճը կազմել է 3.0 մլրդ, դրամային ավանդներինը՝ 7.1 մլրդ և արտարժութայինը՝ 3.3 մլրդ դրամ: Դա հիմնականում պայմանավորվել է Լինսի հիմնադրամից ստացված դրամաշնորհի մեծ ծավալով և Կառավարության կողմից Հոլանդական դրամաշնորհի ծախսմամբ:

Եռամսյակի ընթացքում 2.1 մլրդ դրամով ավելացել են նաև առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ավանդները՝ որը տեղի է ունեցել արտարժութային ավանդների աճի հաշվին:

Փողի զանգվածի բոլոր բաղադրատարրերի աճի պարագայում որոշակի փոխվել են կառուցվածքային համամասնությունները. 1.6 տոկոսային կետով աճել է դրամային ավանդների տեսակարար կշիռը՝ հասնելով 15.6%-ի, որն հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ արտարժութային ավանդների տեսակարար կշռի 1.1 տոկոսային կետով նվազման (46.9%՝ 48%-ի փոխարեն):




Համաձայն 2002 թ. դրամավարկային ծրագրի եռամսյակային բաշխվածության՝ փողի ու դրամի շրջապտույտի արագությունները տարվա ընթացքում պետք է ունենային նվազման միտում, մինչդեռ, բացի առաջին եռամսյակից, հաջորդ երկու եռամսյակներում դրանք ցուցաբերել են աճողական վարքագիծ: Չնայած երրորդ եռամսյակում փողի զանգվածի գրանցված մեծ աճին, ՀՆԱ իրական աճի տեմպերն առավել բարձր են եղել, ինչի արդյունքում փողի շրջապտույտի արագությունը ևս զգալի գերազանցել է ծրագրված մակարդակը, և միջին եռամսյակային ցուցանիշը կազմել է 2.17 (ծրագրայինը՝ 1.77)[3]: Դրամի շրջապտույտի արագության ցուցանիշը նույնպես գերազանցել է ծրագրային մակարդակը՝ կազմելով 4.13 (ծրագրայինը՝ 3.84):





[3] *Փողի և դրամի շրջապտույտի արագությունների փաստացի և ծրագրային ցուցանիշների մեծ շեղման մյուս պատճառը ներկայացված է տողատակ 2-ում:*

**ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ**

Փողի առաջարկի 21.8 մլրդ դրամի աճը հիմնականում ապահովվել է բանկային համակարգի ՁԱԱ-ի՝ 17.4 մլրդ դրամով համալրման հաշվին, քանի որ ստացված հիմնական ինքնավար հոսքերն արտաքին ֆինանսավորման միջոցներն էին: Վերջիններս առավելապես անդրադարձել են ԿԲ ՁԱԱ-ի վրա, որոնք եռամսյակի ընթացքում ավելացել են 10.9 մլրդ դրամով (ավելի մանրամասն կներկայացվի «Փողի բազա» ենթաբաժնում):

Առևտրային բանկերի ՁԱԱ-ն աճել են 6.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արտարժութային ավանդների աճով, որի արդյունքում համալրվել են դրամարկղի կանխիկ արտարժույթը և ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների միջոցները:




Ի տարբերություն ՁԱԱ-ի, որի աճին ԿԲ-ն նպաստել է իր արտաքին ակտիվների ավելացմամբ, բանկային համակարգի ՁՆԱ-ն աճել են ավելի դանդաղ տեմպերով՝ 4.5 մլրդ դրամ, քանի որ ԿԲ ազդեցությունն այստեղ եղել է նվազման ուղղությամբ (շարժերի մանրամասն նկարագիրը տե՛ս «Փողի բազա» ենթաբաժնում): Ընդհակառակը, բանկերի զուտ ներքին ակտիվների գծով արձանագրվել է մեծածավալ աճ՝ մոտ 9.3 մլրդ դրամ, որի հիմնական մասը բաժին է ընկել համակարգի կողմից տնտեսության զուտ վարկավորման ցուցանիշին: Այն աճել է 7.0 մլրդ դրամով կամ 4.8%-ով (զուտ՝ ներառում է նաև 2.5 մլրդ դրամի վատորակ վարկերի ու տոկոսների դուրսգրումը), որը զգալի գերազանցել է տնտեսության ֆինանսավորման ակնկալվող աճը: Ընդ որում, աճը տեղի է ունեցել բացառապես ձեռնարկություններին տրամադրված վարկերի հաշվին, քանի որ մյուս հոդվածներով (տնային տնտեսությունների վարկավորում, ֆակտորինգային գործառնություններ, բանկերի հետ կապված անձանց վարկավորում) շարժերն հիմնականում փոքր ծավալ են կազմել և չեզոքացրել են միմյանց: Տնտեսության վարկավորման աճն այս եռամսյակում ևս հավասարաչափ է բաշխվել դրամով և արտարժույթով տրամադրված միջոցների միջև, միայն այն տարբերությամբ, որ ուղղվել է առավելապես պետական մասնակցությամբ ձեռնարկություններին, մասնավոր հատվածի ֆինանսավորումն ավելացել է ընդամենը 1.0 մլրդ դրամով՝ դրամ/արտարժույթ հավասար բաշխվածությամբ: Ոչ ռեզիդենտներին արտարժութային վարկերի տրամադրումը (զուտ) նվազել է մոտ 200 մլն դրամով:


Երրորդ եռամսյակում բանկային համակարգի կողմից մեծ ծավալի վարկավորում է իրականացվել հիմնականում արդյունաբերության և առևտրի ոլորտներում, փոքր-ինչ աճ է դիտվել նաև շինարարության բնագավառում: Նվազել է գյուղատնտեսության և կապի ոլորտների զուտ վարկավորումը: Ընդ որում, արդյունաբերության ձեռնարկություններին տրամադրված վարկերում հավասար բաժիններ են կազմել դրամային և արտարժութային միջոցները՝ մոտ 4.5 մլրդ դրամ, իսկ առևտրի և շինարարության ֆինանսավորման մեջ գերակայել են դրամով վարկային ներդրումները՝ համապատասխանաբար 7.7 մլրդ և 1.0 մլրդ դրամ: Գյուղատնտեսությունում ևս դիտվել է դրամով վարկավորման աճ՝ մոտ 2.2 մլրդ դրամի, սակայն դրան զուգահեռ, ավելի քան 3.0 մլրդ դրամով նվազել են արտարժութային վարկերը:

Բանկային համակարգի զուտ ներքին ակտիվների մյուս երկու տարրերից՝ Կառավարության զուտ պարտավորությունները նվազել են 5.0 մլրդ դրամով՝ ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների նվազման ազդեցությամբ, իսկ բանկերի պահանջները Կառավարության հանդեպ աճել են 1.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արժեթղթերի պորտֆելների համալրմամբ:

Ինչ վերաբերում է համակարգի զուտ այլ ակտիվներին, ապա դրանք, ԿԲ զուտ այլ ակտիվների՝ եռամսյակի կտրվածքով գրեթե անփոփոխ մակարդակի պարագայում, աճել են բանկերի այլ ակտիվների հաշվին՝ 2.5 մլրդ դրամով: Դա հիմնականում պայմանավորված է եղել վերոնշյալ վատորակ վարկերի և տոկոսների դուրսգրմամբ:

## ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Երրորդ եռամսյակում բավականին բարձր է եղել փողի ագրեգատների ընդլայնման բազմարկչային էֆեկտը: Փողի և դրամային բազմարկիչների միջին եռամսյակային մեծությունները համապատասխանաբար կազմել են 2.12 և 1.11: Դրանց աճի տեմպերը նախորդ եռամսյակի համեմատ զգալի գերազանցել են ծրագրված անշան աճերը: Շրջանառությունում գտնվող կանխիկի և ավելցուկ պաշարների զգալի աճի՝ բազմարկիչների վրա ունեցած նվազեցնող ազդեցությունը չեզոքացվել է, և աճ է արձանագրվել ավանդների մեծածավալ աճի հաշվին: Վերջինիս մեջ, ինչպես վերը նշվել է, գերակշռել է արտարժութային ավանդների բաժինը, ինչով էլ հիմնականում բացատրվում է դրամային բազմարկչի համեմատ փողի բազմարկչի ավելի բարձր աճի տեմպը. 3.4%՝ 1.8%-ի դիմաց: Ընդ որում, առաջին եռամսյակում փողի բազմարկչի կտրուկ նվազումը հետևանք է տարեսկզբից փողի ագրեգատների հաշվարկում 22 բանկերի տվյալների ընդգրկման, որը դրամային բազմարկչի վրա էական ազդեցություն չի ունեցել՝ պայմանավորված հաշվարկից հանված 6 բանկերում դրամային ավանդների փոքր տեսակարար կշռով: Հաջորդ եռամսյակներում երկու բազմարկիչներն էլ ցուցաբերել են բնականոն աճի տեմպեր, ինչը վկայում է, որ համակարգում պահպանվել է ֆինանսական կայունություն, դեռ ավելին՝ զգալի բարձրացել է բանկերի ֆինանսական միջնորդության աստիճանը:





## ՓՈՂԻ ԲԱԶԱ

Փողի բազայի կառավարման եռամսյակային սցենարով, ի սկզբանե, ինչպես վերը նշվել է, նախատեսվում էր փողի բազայի զգալի աճ, սակայն միջակայքի ներքին սահմանին մոտ կառավարելու նկատառումով: Այս տեսանկյունից եռամսյակը կարելի է դիտարկել երկու ժամանակահատվածով՝ հուլիս-օգոստոս, երբ հիմնականում իրագործվել է նախանշված ծրագիրը, և սեպտեմբեր, երբ, վերը նշված անկանխատեսելի գործոններով պայմանավորված՝ դիտվել են ծրագրից էական շեղումներ: Վերջիններս առավել չափով վերաբերում են հուլիս - օգոստոսին արձանագրված 8% դեֆլյացիային և, արդեն օրինաչափություն դարձած՝ Կառավարության միասնական հաշվում միջին օրական մինչև 3.0 մլրդ դրամ մնացորդի առկայությանը: Քանի որ ստեղծված իրավիճակում ԿԲ համար բավականին ռիսկային էր դարձել գլխավոր նպատակի՝ սղաճի տարեկան ծրագրի ապահովումը, որոշակի ճշգրտումներ են կատարվել դրամավարկային քաղաքականության ուղղություններում: Փոփոխություններ են մտցվել նաև կիրառվող գործիքակազմում. եթե նախնական սցենարում նախատեսվում էր սպասվող մեծածավալ ինքնավար ներհոսքի ստերիլացում՝ մինչև փողի բազայի տատանման միջակայքի ներքին սահմանը, ապա ճշգրտված տարբերակում դրվում էր արդեն վերին սահմանին մոտ կամ հաճախ նաև՝ այն գերազանցող մակարդակի ապահովման խնդիր, ինչը ենթադրում էր ԿԲ կողմից, ֆինանսական ներհոսքին զուգահեռ, նույնիսկ իրացվելիության ներարկում: Ընդ որում, հիմնական ներարկող գործիք էր ընտրվել արտարժույթի առքը՝ պայմանավորված մեծածավալ ֆինանսական ներհոսքով, որը, փողի բազան տատանման միջակայքում պահելու անհրաժեշտության դեպքում, կարող էր ուղեկցվել ներքաշող ուղղությամբ ռեպո համաձայնագրերի գործիքի կիրառմամբ: Այդ մասին ԿԲ-ն, սեպտեմբերի առաջին կեսին, հանդես է եկել հայտարարությամբ:

Եռամսյակի վերջի դրությամբ փողի բազայի, պետբյուջեի հետ փոխհարաբերություններն արտահայտող ցուցանիշների ձևավորված փաստացի մակարդակների, ընթացքում դրանց ցուցաբերած վարքագծի, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման հարցերի առումով երրորդ եռամսյակն էապես չի տարբերվել նախորդներից: Այսպես, եռամսյակն ավարտվել է

փողի բազայի՝ տատանման թույլատրելի միջակայքի ներքին սահմանից ցածր մակարդակով՝ 80.4 մլրդ դրամ (ներքին սահմանը՝ 80.5 մլրդ դրամ), այն դեպքում, երբ ծրագրվել էր այն կառավարել վերին սահմանի շրջակայքում: Դա պայմանավորվել է սեպտեմբերի վերջին օրերին հավաքագրված աննախադեպ մեծ ծավալի հարկային մուտքերի հաշվին Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի կտրուկ աճով, որի հետևանքով հաշվի մնացորդը հասել է 11.5 մլրդ դրամի: Այսինքն, եթե բացառենք փողի բազայի վրա այս գործոնի ազդեցությունը և եռամսյակների վերջի դրությամբ միասնական հաշվի մնացորդն ընդունենք երրորդ եռամսյակի միջին օրական 3.0 մլրդ դրամ մակարդակը, ապա փողի բազայի եռամսյակային աճը կկազմի մոտ 13% կամ 10.2 մլրդ դրամ, որը շատ ավելի բարձր է, քան նախատեսված էր դրամավարկային ծրագրով (ավելի քան 5.1 մլրդ դրամով գերազանցել է միջակայքի վերին սահմանը): Միասնական հաշվի մնացորդի նույն պայմանի դեպքում, մեծ է աճը նաև նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ՝ 27.5%, ինչը մեկ տարվա կտրվածքով ևս վկայում է ԿԲ իրականացրած առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին:





Աննախադեպ խոշոր շարժեր են գրանցվել նաև ՀՀ ԿԲ ԶԱԱ կառուցվածքում: Մասնավորապես, Լիհսի հիմնադրամի կողմից ստացվել է 9.4 մլրդ դրամին համարժեք արտարժույթ, որից՝ 1.8 մլրդ դրամն ուղղվել է ներմուծվող ապրանքների ձեռքբերմանը, իսկ մնացածը՝ ներհոսել տնտեսություն: ԶԱԱ աճ են ապահովել նաև ստացված Հոլանդական դրամաշնորհը (երրորդ եռամսյակի ծրագրով նախատեսված չէր, ակնկալվում էր չորրորդում), սեփականաշնորհման հատուկ հաշվից գնված միջոցները[4], արտաքին պահուստների կառավարումից ստացված եկամուտները և շուկայից գնված արտարժույթը՝ 11.8 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Դրան զուգահեռ, իրականացվել են 6.0 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում և 2.5 մլրդ դրամին համարժեք այլ փոխարկումներ: Արդյունքում՝ ԿԲ ԶԱԱ-ն համալրվել են մոտ 11.0 մլրդ դրամով և սեպտեմբերի 30-ի դրությամբ հասել 94.9 մլրդ դրամի, այն դեպքում, երբ ծրագրված էր ցուցանիշի 78.5 մլրդ դրամ նվազագույն մակարդակ: Ընդ որում, ԿԲ կողմից երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքականության նման ուղղվածության արդյունքում կանխվել է նաև դրամի փոխարժեքի անցանկալի արժեքավորումը:

ՀՀ ԿԲ ԶՆԱ-ն եռամսյակի ընթացքում նվազել են ավելի քան 4.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջին իջել անհամեմատ ցածր մակարդակի՝ –14.4 մլրդ դրամի: Վերջինիս նման վարքագծի հիմնական պատճառը Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի ազդեցությունն է, որի կառուցվածքային բոլոր տարրերի շարժերն էլ նպաստել են դրա նվազմանը: Այսպես, ԿԲ արժեթղթերի պորտֆելից եռամսյակի ընթացքում մարվել է մոտ 1.9 մլրդ դրամ (որից՝ 1.0 մլրդ դրամը նախկին վարկային գծի դիմաց տրամադրված արժեթղթերի վաղաժամկետ մարումն է), ԿԲ-ում Կառավարության ավանդներն ավելացել են 734 մլն դրամով, իսկ միասնական հաշվի մնացորդն աճել է 4.2 մլրդ դրամով: Ընդ որում, եթե նախորդ եռամսյակներում միասնական հաշվում կուտակված միջոցներն ավելի փոքր ծավալ էին կազմում և հիմնականում ծախսվում յուրաքանչյուր ամսվա առաջին 10 օրվա ընթացքում, ապա այս եռամսյակում դրանց ծավալներն անհամեմատ մեծ էին և եռամսյակի ընթացքում գրեթե միշտ պահպանել են բարձր մակարդակ: Հիմնական պատճառն այն է, որ երրորդ եռամսյակում, ծրագրված բյուջետային եկամուտ-


*[4] Կառավարության կողմից սեփականաշնորհման հատուկ հաշվի միջոցները նախատեսված սահմանաչափով ծախսելու դեպքում արտարժութային միջոցները փոխարկում է ԿԲ-ն:*

ների ապահովման և չնախատեսված հոսքերի ստացման պայմաններում, գոյացել են միջոցներ, որոնք խնայվել են՝ չորրորդ եռամսյակին բաժին ընկնող գերակշիռ բյուջետային ծախսերի կատարմանն ուղղելու նպատակով: Ծախսերի կատարումը ռիսկային էր դառնում նաև չորրորդ եռամսյակում ակնկալվող ԿԲՎ - 4-ի լողացող մասնաբաժնի ստացման փոքր հավանականությամբ պայմանավորված (ըստ Համաշխարհային բանկի փորձագետների տեղեկատվության): Հարկաբյուջետային քաղաքականության նման խնայողական ռեժիմը բացասաբար է անդրադարձել դրամավարկային քաղաքականության ընդլայնողական բնույթի վրա, քանի որ ԿԲ կողմից ներարկված իրացվելիությունը կարճ ժամանակահատվածում վերադարձել է ԿԲ՝ Գանձապետական միասնական հաշվում միջոցների կուտակման հետևանքով, այլ ոչ թե նպաստել գների վրա ազդեցություն ունեցող համախառն պահանջարկի խթանմանը:





ԶՆԱ կառուցվածքում մյուս էական փոփոխությունը կրել է բանկերի զուտ պարտավորությունների ցուցանիշը՝ ավելի քան 2.1 մլրդ դրամի աճ, ինչը տեղի է ունեցել Վերակառուցման վարկերի բանկի (KfW) կողմից ստացված միջոցների հաշվին առևտրային բանկերին վարկեր տրամադրելու արդյունքում: ԿԲ կողմից կնքվել են նաև կարճաժամկետ (7 և 14-օրյա) ռեպո համաձայնագրեր՝ 2.9 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որը, որպես ճշգրտող գործիք, ԿԲ-ն կիրառել է բանկերում առաջացած իրացվելիության պակասը լրացնելու նպատակով: Որոշ դեպքերում բանկերը դիմել են ԿԲ մշտական հնարավորության գործիքներին ևս (ավելի քան 1.0 մլրդ դրամի լոմբարդ և 245 մլն դրամի ավանդ):


Փողի բազայի կառուցվածքում եռամսյակի կտրվածքով աճը պայմանավորվել է բացառապես ԿԲ-ից դուրս կանխիկի աճով՝ 6.9 մլրդ դրամ, որի պատճառը մեկնաբանվում է ազդեցության նույն գործոններով, ինչ որ՝ բանկային համակարգից դուրս կանխիկինը: Թղթակցային հաշվի միջոցները նվազել են մոտ 900 մլն դրամով, որը հիմնականում սեպտեմբերի վերջին օրը բանկերի թղթակցային հաշիվներից մեծածավալ հարկերի հավաքագրման հետևանք է, այն պարագայում, երբ եռամսյակի ընթացքում բանկերը գրեթե միշտ պահպանել են թղթակցային հաշիվների բարձր մակարդակ. միջին օրական ավելցուկ պաշարները կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ:



Բանկերի կողմից տնօրինվող ավելցուկային իրացվելիությունը եռամսյակի ընթացքում ցուցաբերել է աստիճանական աճի միտում. հուլիսին՝ մոտ 1.0 մլրդ, օգոստոսին՝ 1.5 մլրդ և սեպտեմբերին՝ 1.7 մլրդ դրամ: Չնայած արձանագրված աճին, եռամսյակի որոշ ժամանակահատվածներում, հատկապես օգոստոսին, բանկերում ծագել են իրացվելիության կարճաժամկետ խնդիրներ՝ պայմանավորված բյուջեի հարկային ծրագրի կատարման ընթացքով և Լինսի հիմնադրամից ակնկալվող դրամաշնորհի ստացման ձգձգումներով, որը հարթելու նպատակով, ինչպես վերը նշվել է, ԿԲ-ն կիրառել է կարճաժամկետ ճշգրտող ռեպո գործիքը:





Երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը գնահատելու նպատակով կիրառվել են դրամավարկային պայմանների ինդեքսը[5] և դրամավարկային կանոնները[6]: Դրամավարկային պայմանների ինդեքսը երրորդ եռամսյակում մի փոքր նվազել է, ինչը վկայում է ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության ընդլայնողական ուղղվածության մասին: Դրամավարկային պայմանների ինդեքսի նվազմանը հիմնականում նպաստել է երրորդ եռամսյակի ընթացքում իրական տոկոսադրույքների աճի համեմատությամբ իրական արդյունավետ փոխարժեքի՝ առավել բարձ տեմպերով արժեզրկումը, որին դրամավարկային պայմանների ինդեքսի հաշվարկում հատկացված է ազդեցության առավել բարձր տեսակարար կշիռ:




Փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների համադրումը ցույց է տալիս, որ փողի բա-


[5] *Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բաներում»:*
[6] *Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:*

զայի փաստացի ցուցանիշը երրորդ եռամսյակում աճել է՝ վերադառնալով կանոնով հաշվարկված մակարդակին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ հաշվարկում միջինացվում են փողի բազայի ամսվա վերջի մակարդակները, որոնց վրա էական է եղել հարկաբյուջետային քաղաքականության զսպողական ազդեցությունը, ապա իրականում փողի բազայի փաստացի ցուցանիշը զգալի գերազանցել է կանոնով հաշվարկված մեծությունը, կամ որ նույնն է՝ ԿԲ կողմից իրականացվել է ծրագրի համեմատ առավել ընդլայնողական քաղաքականություն, ինչը և նախապես հայտարարվել էր:





## ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Երրորդ եռամսյակում ևս, որպես կանոն, ֆինանսական շուկայի միտումների վրա էական ազդեցություն է ունեցել իրացվելիության ավելցուկի վարքագիծը: Մասնավորապես, ՊՊ հատվածում հուլիս-օգոստոսին, երբ ավելցուկ պաշարների մակարդակը համեմատաբար ցածր էր, և հիմնականում թողարկվում էին երկար ժամկետայնության պետարժեթղթեր, եկամտաբերությունը որոշակիորեն աճել է. առաջնային շուկայում 9-12-ամսյա արժեթղթերինը՝ հունիսի 15.1%-ից հասել է 15.8%-ի: Սեպտեմբերին, ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակի պայմաններում, նույն ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունն արդեն նվազել է մոտ 1.0 տոկոսային կետով: Եռամսյակի ընթացքում նվազել է նաև արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 18.7%-ից՝ 17.5%-ի:





Վարկային և ավանդային հատվածներում ևս տոկոսադրույքները նվազել են: Այսպես, դրամով վարկերի տոկոսադրույքներն իջել են 3.4, իսկ արտարժութային վարկերինը՝ 1.3 տոկոսային կետով: Ներգրավված միջոցների տոկոսադրույքներից, ընդհակառակը, առավել նվազել են արտարժութային ավանդներինը՝ 2.7 տոկոսային կետով, իսկ դրամով ավանդների տոկոսադրույքները՝ 1.4 տոկոսային կետով: Արդյունքում, փոքր-ինչ նվազել է դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը)՝ 18.2%-ից հասնելով 16.2%-ի, և աճել արտարժութային սպրեդը՝ 18.4%-ից՝ 19.8%-ի:


Ելնելով ֆինանսական շուկայում ձևավորված միտումներից և առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը հիմնականում արտարժույթի գնման գործիքի միջոցով իրականացնելու նախապատվությունից՝ ԿԲ խորհուրդը երրորդ եռամսյակում անփոփոխ է թողել դրամային գործառնությունների տոկոսադրույքները: Պահպանվել են ռեպո համաձայնագրերի 13.5%, երկրորդային շուկայում արժեթղթերի առքուվաճառքի 14.5%, լոմբարդային վարկերի 28% և ավանդների 6% դրույքաչափերը:



2002 թվականի երրորդ եռամսյակում ֆինանսական շուկայում տոկոսադրույքները դրսևորել են տարբեր վարքագիծ՝ կախված գործիքի տեսակից: Հատկապես նվազել են առևտրային բանկերի կողմից թե՛ ԱՄՆ դոլարով, թե՛ ՀՀ դրամով ներգրաված միջոցների տոկոսադրույքները: Այսպես, եռամսյակի ընթացքում դրամային ավանդների տոկոսադրույքները տատանվել են 7.6%-ի, իսկ ԱՄՆ դոլարով ավանդներինը՝ 8.4%-ի շրջակայքում:





ՀՀ առևտրային բանկերի կողմից ինչպես դրամային, այնպես էլ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները փոքր-ինչ նվազել են՝ տատանվելով 26.5 %-ի շուրջ:




Ի տարբերություն ներբանկային շուկայի տոկոսադրույքների նվազման, ՊՊ երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը՝ պայմանավորված շրջանառությունում պարտատոմսերի ժամկետայնության երկարացմամբ, նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 1.34 տոկոսային կետով՝ կազմելով 15.36%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները, նախորդ եռամսյակի համեմատությամբ, ավելացել են 4.5 մլրդ դրամով՝ կազմելով 12.4 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 930 մլն դրամ:


Երրորդ եռամսյակում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների աննախադեպ աճ է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալները աճել են 13 մլրդ դրամով՝ կազմելով 35.5 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 7 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 2.6 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը, նախորդ եռամսյակի համեմատությամբ, աճել է 2.17%-ով և կազմել 13.99%:




Ինչպես վկայում է երրորդ եռամսյակի վերջի դրությամբ եկամտաբերության սփոթ կորի թեքվածությունը, հաջորդ եռամսյակում եկամտաբերության էական աճ տեղի չի ունենա:


Ի տարբերություն նախորդ եռամսյակի, այս եռամսյակի ընթացքում զգալիորեն կրճատվել է ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների կողմից պետական արժեթղթերում կատարված ներդրումների մակարդակը: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը նվազել է 3.02 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջում կազմելով 10.56% կամ 3.839.3 մլն դրամ: 2.2 տոկոսային կետով նվազել է նաև ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ տեսակարար կշիռը:

Արդյունքում, սեպտեմբերի 30-ի դրությամբ ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 93.93%-ը՝ 34.137.12 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 6.07%-ը կամ 2.206.07 մլն դրամ:





ՊՊ առաջնային շուկան երրորդ եռամսյակի ընթացքում բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ ընդհանուր պահանջարկի կրճատմամբ (թողարկման ծավալի 157.4%-ը): Դա հիմնականում պայմանավորված էր օգոստոսի սկզբին ավելցուկային իրացվելիության կրճատմամբ, որը հանգեցրեց ՊԿՊ նկատմամբ պահանջարկի նվազման և որոշ թողարկումների թերտեղաբաշխման, ինչպես նաև եռամսյակի

վերջում միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի կրճատմամբ: Արդյունքում՝ երրորդ եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերի տոկոսադրույքները տատանվել են 14.72% - 16.03% միջակայքում: Ընդ որում, դեռևս նախորդ եռամսյակից արձանագրված՝ տոկոսադրույքների աճի միտումը շարունակվել է մինչև օգոստոսի կեսերը, որից հետո նկատվել է որոշակի կայունություն: Այսպես՝ հուլիսին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 15.63%, օգոստոսին՝ 15.57%, սեպտեմբերին՝ 14.92%:




2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի 10 թողարկում՝ 6.1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 800.0 մլն դրամը՝ 183-273 օր շրջանառության ժամկետով և 5.3 մլրդ դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 3 թողարկում՝ 3.14 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Տեղի է ունեցել նաև ՊԿՊ թերտեղաբաշխված թողարկումների 2 տեղաբաշխում՝ 529.773 մլն դրամ ծավալով:




Արդյունքում, սեպտեմբերի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի համեմատ, աճել է 649.361 մլն դրամով՝ կազմելով 36343.195 մլն դրամ:


Պայմանավորված փողի բազայի կառավարման խնդիրներով՝ 2002 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամային շուկայում սակավաթիվ գործարքներ են իրականացվել:

Միայն օգոստոս ամսին կնքվել են 7 և 14-օրյա ռեպո գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 2.863 մլն դրամ՝ նախորդ եռամսյակից պահպանվող՝ տարեկան 13.5% սահմանված տոկոսադրույքով:

Բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության հարթեցման նպատակով ՀՀ ԿԲ իրականացրած ռեպո գործառնությունները հանգեցրել են լոմբարդային վարկերի ծավալների կրճատման: Մասնավորապես, երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվել է մոտ 1.026 մլն դրամի


վարկի պահանջարկ, որից 508 մլն դրամը՝ հուլիսին, իսկ 518 մլն դրամը՝ օգոստոսին՝ սահմանված 28% եկամտաբերությամբ:


Եռամսյակի ընթացքում միայն սեպտեմբերին է Կենտրոնական բանկ ներկայացվել 245 մլն դրամի ավանդի պահանջարկ՝ սահմանված տարեկան 6% եկամտաբերությամբ:




ՀՀ արժութային շուկայում շարունակվել է ՀՀ դրամի փոխարժեքի՝ երկրորդ եռամսյակի վերջին ձևավորված արժեքավորման միտումը, որը սեպտեմբերի կեսերից, հիմնականում պայմանավորված ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականության խիստ ընդլայնողական բնույթով, դրսևորել է արժեզրկման միտում: Այսպես, եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքն արժեքավորվել է 3.28%-ով (575.35 դրամից՝ 556.49 դրամ), որից հետո արժեզրկվել է 4.08%-ով՝ մինչև 580.18 դրամ:

Եռամսյակի կտրվածքով արժեզրկումը կազմել է 0.83% (միջին շեղում՝ 7.23 դրամ, վարիացիա՝ 52.27):



Եռամսյակի ընթացքում ՀՀ արժութային շուկայում ԱՄՆ դոլարի առքի ծավալը կազմել է 186.07 մլն, իսկ վաճառքի ծավալը՝ 188.92 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 561.13 և 564.48 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

**ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները (մլն ԱՄՆ դոլար) և միջին փոխարժեքները**

| Ամիս | Առք | Վաճառք | Միջին փոխարժեք | Միջբանկային գործառնություններ |
|---|---|---|---|---|
| Հուլիս | 63.71 | 66.83 | 565.52 | 10.42 |
| Օգոստոս | 55.68 | 56.51 | 558.25 | 13.84 |
| Սեպտեմբեր | 66.68 | 65.58 | 561.47 | 12.12 |
| Ընդամենը | 186.07 | 188.92 | 561.92 | 36.38 |

# ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բանկային համակարգի առողջացման և հուսալիության ապահովման քաղաքականությունը: Եռամսյակի հիմնական ցուցանիշները վկայում են բանկային համակարգի կայունության և ազգաբնակչության վստահության վերականգնման միտումների մասին:

2002 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 28 բանկ՝ 236 մասնաճյուղերով: Բանկային գործունեության լիցենզիայի՝ ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանություն է ստացել և Կենտրոնական բանկում որպես իրավաբանական անձ է գրանցվել ևս մեկ բանկ:

ՀՀ տարածքում գործող 28 բանկերից ութը գտնվել են հատուկ վերահսկողության դաշտում: Վերահսկողության հատուկ դաշտում գործող բանկերը իրենց գործունեությունը շարունակել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված առողջացման ծրագրերի շրջանակներում: Երրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են այդ բանկերի ակտիվների վերադարձի և ավանդային միջոցների մարման աշխատանքները:

Բանկային համակարգի ներկայացվող վերլուծությունը իրականացվել է 30.09.2002 թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 բանկերի տվյալների հիման վրա:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 3.3%-ով և 30.09.02թ. դրությամբ կազմել է 37.7 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված էր բանկերի շահութաբեր գործունեությամբ և մեկ բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի՝ 122.4 մլն դրամով համալրմամբ:

2002 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ եկամուտների պահուստների 1.1 մլրդ դրամի աճը բացատրվում է նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի 0.2 մլրդ դրամով նվազմամբ (պայմանավորված է հիմնականում թվով 1 բանկի կողմից 225.2 մլն դրամի շահաբաժինների վճարումով) և ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի 1.3 մլրդ դրամի աճով:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները նախորդ եռամսյակի համեմատ փոփոխություն են կրել. ընդհանուր կապիտալի համարժեքությունը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 31.1%, հիմնական կապիտալի համարժեքությունը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 29.7%, որը պայմանավորված է ռիսկով կշռված ակտիվների 3.7% աճով, մասնավորապես՝ վարկային ներդրումների 22.1% աճով, որը չի ուղեկցվել նորմատիվային հիմնական կապիտալի համապատասխան աճով (աճել է միայն 2.2%-ով):

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 13.6%-ով և 30.09.2002 թ. դրությամբ կազմել 174.0 մլրդ դրամ: Պարտավորությունների զգալի աճը վկայում է, որ 2002թ. II եռամսյակում բանկային համակարգի նկատմամբ ձևավորված վստահության աճը իր կայուն միտումն է դրսևորել նաև երրորդ եռամսյակում:


Տնտեսությունից ներգրաված միջոցները նախորդ եռամսյակի համեմատ աճել են 15.7%-ով՝ պայմանավորված ցպահանջ պարտավորությունների 12.9%-ով, ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 3.2%-ով և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների 38.7%-ով աճով, որոնց ծավալները 30.09.2002 թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են՝ 71.5, 38.8 և 31.7 մլրդ դրամ:

30.09.2002 թ. դրությամբ տնտեսությունից ներգրավված միջոցների կառուցվածքում դրամային միջոցները կազմել են 20.2%, իսկ արտարժութային միջոցները՝ 79.8%:

Բանկերից ներգրավված միջոցները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել են 4.9%-ով, ընդ որում՝ բանկերից ներգրավված ավանդները և թղթակցային հաշիվների մնացորդները նվազել են 64.8% և 39.2%-ով և համապատասխանաբար կազմել 0.9 և 4.1 մլրդ դրամ, իսկ բանկերից ստացված վարկերն աճել են 31.1%-ով և 30.09.02 դրությամբ կազմել 13.9 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 16 բանկերում: Աճի 54.5%-ը բաժին է ընկել 3 բանկերի: Իսկ 4 բանկերի ընդհանուր պարտավորությունների նվազման 46.7%-ը բաժին է ընկել մեկ բանկի, որը նախկինում բանկերից ստացված վարկերի մարման և արտարժույթով ցպահանջ պարտավորությունների նվազման արդյունք է:

**Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը**




*1. Ցպահանջ պարտավորություններ, 2. Վարկեր (ավանդներ) բանկերից, 3. Ֆիզ. անձանց ավանդներ, 4. Իրավ. անձանց ավանդներ, 5. Այլ պարտավորություններ, 6. Վճարվելիք տոկոսներ*

Ընդհանուր առմամբ, պարտավորությունների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են գործարար ակտիվության և բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության վերականգնման միտումների մասին, ինչը և խթան է հանդիսացել բանկերի համար, ցպահանջ պարտավորությունների աճի պայմաններում, հրաժարվել միջբանկային շուկայի միջոցներից:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2002 թ. երրորդ եռամսյակում բանկային համակարգի ակտիվներն աճել են 11.6%-ով և կազմել 211.8 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է դրամական միջոցների 8.2%, պետական արժեթղթերում ներդրումների 19.1% և տնտեսության վարկավորման 17.1% աճով: Դրանց ծավալները 30.09.2002 թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 65.3, 28.8 և 69.7 մլրդ դրամ:


Բանկերի ժամկետային ակտիվները, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ, աճել են 17.6%-ով, ընդ որում՝ բանկերում ներդրված ավանդները և տրամադրված վարկերը համապատասխանաբար ավելացել են 14.4% և 162.7%-ով: Դրանց ծավալները 30.09.2002թ. դրությամբ կազմել են՝ 17.6 մլրդ դրամ և 379.1 մլն դրամ:

Ակտիվների աճ է արձանագրվել 17 բանկերում. ընդհանուր ակտիվների աճի 36.3%-ը բաժին է ընկել թվով 2 բանկերի: Թվով 3 բանկերի ընդհանուր ակտիվների նվազման 51.5%-ը բաժին է ընկել մեկ բանկի:

Վարկային ներդրումները (ներառյալ միջբանկային վարկերը) ավելացել են 19.5%-ով՝ 30.09.2002 թ. դրությամբ կազմելով 92.1 մլրդ դրամ, ինչը համահունչ զուգորդվել է տնտեսությունում արձանագրված տնտեսական աճի հետ: Նախորդ եռամսյակի համեմատ, տնտեսությանը տրված վարկերի ծավալներում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. գյուղատնտեսության սեզոնային աշխատանքների ավարտով և վարկերի վերադարձով պայմանավորված՝ գյուղատնտեսությանը տրված վարկերը նվազել


են 55.8%-ով, տրանսպորտի և կապի վարկերը նվազել են 50.6%-ով, սպառողական վարկերն աճել են 21.3%-ով, իսկ արդյունաբերությանը տրված վարկերը (առանց էներգետիկայի ոլորտի) աճել են 27.1%-ով և համապատասխանաբար կազմել ՝ 3.1, 0.8, 10.9, 14.2 մլրդ դրամ:

**Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը** *(մլն ՀՀ դրամ)*




*1. Կանխիկ դրամական միջոցներ*
*2. Թղթ. հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ*
*3. Պետական արժեթղթեր*
*4. Բանկերում տեղաբաշխված ավանդներ (վարկեր)*
*5. Ավանդներ ԿԲ-ում*
*6.Վարկեր տնտեսությանը*
*7. Պահուստաֆոնդ*
*8. Այլ ակտիվներ*
*9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ*
*10. Հիմնական միջոցներ*
*11. Այլ արժեթղթեր*
*12. Լիզինգ, ֆակտորինգ*
*13. Հակադարձ ռեպո պայմանագրեր*
*14. Ռեպո համաձայնագրեր*

**Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի**




*1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,*
*5. Առևտուր, 6. Ֆինանսական հատված, 7. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր*

Ըստ ռիսկի խմբերի վարկային ներդրումների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 2.2 տոկոսային կետով նվազել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել վարկային ներդրումների 6.0%-ը: Արդյունքում՝ 30.09.02 թ. դրությամբ վարկային պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը կազմել են 94.0%, «հսկվող» վարկերը՝ 3.1%, «ոչ ստանդարտ» վարկերը՝ 1.6%, «կասկածելի» վարկերը՝ 1.3%:

30.09.02 թ. դրությամբ վարկերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմել է վարկային ներդրումների 2.2%-ը՝ նախորդ եռամսյակի 3.5%-ի փոխարեն:

Վարկային ներդրումների աճի արդյունքում 2002թ. երրորդ եռամսյակում 3.0 տոկոսային կետով աճել է եկամտաբեր ակտիվների ծավալը և կազմել 115.7 մլրդ դրամ:

Բանկային համակարգի իրացվելիությունը եռամսյակի ընթացքում պահպանվել է բավականին բարձր մակարդակի վրա: Այդ են վկայում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմա-

տիվների ցուցանիշները. 30.09.2002 թ. դրությամբ Ն2[1]-ը կազմել է 47.5%, իսկ Ն2[2] –ը՝ 118.6%՝ պահանջվող 25% և 80%-ի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, վարկային պորտֆելի որակի բարելավումը և բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշռի աճը վկայում են բանկերի կողմից ռիսկերի կառավարման ավելի կշռադատված քաղաքականության իրականացման մասին: Բանկային համակարգի զարգացման ներկա՝ համախմբման փուլում բանկերը ձգտում են բարձր ռիսկային գործունեության ծավալների սահմանափակմամբ ամրապնդել իրենց կայունությունը և, որպես արդյունք՝ բարելավել դիրքերը մրցակիցների նկատմամբ:

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Ինն ամիսների ընթացքում բանկային համակարգը ստացել է 28.8 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 25.7 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ ընթացիկ տարվա 9 ամիսների գործունեության ընթացքում բանկերի չբաշխված շահույթը հարկումից հետո կազմել է 2.6 մլրդ դրամ:

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ բանկային համակարգում ձևավորված համախառն եկամուտների 46.1%-ը բաժին է ընկել տոկոսային եկամուտներին:

Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձման արդյունքում ստացված եկամուտները կազմել են համախառն եկամտի 29.1%-ը:

Ոչ տոկոսային եկամուտների կշիռը կազմել է 24.8%: Ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում, ոչ տոկոսային եկամուտների կազմում գերակշռել են ստացված կոմիսիոն վճարները՝ 68.4%:

Ընդհանուր առմամբ, երրորդ եռամսյակի ընթացքում շահույթով են աշխատել 15 բանկեր, որոնց շահույթը կազմել է 1.7 մլրդ դրամ: Վնասով աշխատող 5 բանկերի վնասը կազմել է 419.1 մլն դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է այդ բանկերի կողմից ակտիվների որակի ճշգրտումներով:

Երրորդ եռամսյակում շահութաբերության մակարդակի զգալի աճը հիմնականում բացատրվում է.


- տոկոսային եկամուտների աճով՝ պայմանավորված տնտեսական աճի և բանկային համակարգի ավանդների աճին զուգընթաց՝ եկամտաբեր ակտիվների՝ հիմնականում վարկերի աճով,
- բանկային համակարգի կոմիսիոն վճարների աճով՝ պայմանավորված բանկային համակարգի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմամբ, ինչպես նաև գործարար մթնոլորտի աշխուժացմամբ:

2002 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում, երկրորդ եռամսյակի համեմատ, ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացվող վճարումներն ավելացել են, մասնավորապես՝ եռամսյակի վերջի դրությամբ կազմել են՝ ծավալային մասով 326315 մլն դրամ (երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 60306 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 266392 (երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 80317-ով): Աճել է նաև իրականացված դրամական փոխանցումների միջին օրական շրջանառությունը՝ ծավալը կազմել է մոտ 5099 մլն դրամ, քանակը՝ 4162: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված ընդհանուր վճարումների և՛ ծավալը, և՛ քանակը, համապատասխանաբար՝ 76955 մլն դրամով և 70442-ով: Վճարումների ավելացումը հիմնականում պայմանավորված է էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվող փոխանցումների կտրուկ աճով:

2002 թ. երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների կառուցվածքում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են եռամսյակի ընթացքում կատարված ընդհանուր վճարումների ծավալի շուրջ 50%-ը:

ՀՀ կենտրոնական բանկի քլիրինգային համակարգի միջոցով վճարումներ չեն իրականացվել, ինչը բացատրվում է բանկերում բարձր իրացվելիության առկայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ քլիրինգային սեանսին ներկայացվող փաթեթների ձևավորումը, ըստ էության, ծախսատար ու աշխատատար է, և բանկերը դրամական միջոցների փոխանցման համար օգտվում են ավելի հարմար միջոցներից՝ էլեկտրոնային վճարումների համակարգից:

**ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան**




## ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ CBANet միջբանկային համակարգչային ցանցին անդամակցում էր 227 բաժանորդ, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, առևտրային բանկերը (28 գլխամասային ստորաբաժանում և 141 մասնաճյուղ), Գանձապետարանը (Կենտրոնական գանձապետարանը և 44 տեղական գանձապետական բաժանմունք), «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը, ՀՀ պետական մաքսային կոմիտեն (իր 3 մաքսատներով), Միջպետական բանկը (ք. Մոսկվա), ՀՀ-ում գործող Միջպետական բանկի ներկայացուցչությունը և Հայաստանի բանկերի միությունը:

Արձանագրվել է CBANet միջբանկային համակարգչային ցանցի խափանումների 37 դեպք, որոնց տևողությունը կազմել է խափանումների հետևանքով չաշխատած բաժանորդների աշխատանքային ժամի 7.1%-ը: Խափանումների պատճառը եղել են կապուղիների հետ կապված հիմնախնդիրները:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

### ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 196, այդ թվում՝ ընդգրկվել են նաև Կենտրոնական բանկը, ՀՀ գանձապետարանը՝ իր 44 բաժանմունքներով, 28 առևտրային բանկեր՝ իրենց 117 մասնաճյուղերով, ՀՀ կենտրոնական բանկի 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա): Հաշվետու ժամանակահատվածում վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով՝ համակարգի մասնակիցների կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 81.7%-ը, քանակի 98.5%-ը՝ նախորդ եռամսյակի համեմատ տեսակարար կշիռը համապատասխանաբար աճել է 2% և 1%-ով:

Երկրորդ եռամսյակի համեմատ, էլեկտրոնային վճարումների կառուցվածքում (ծավալում՝ 7.9, քանակում՝ 27.4 տոկոսային կետերով) ավելացել են խմբային վճարումների հանձնարարականներով փոխանցումները:

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1264-ով՝ կազմելով մոտ 4100, իսկ ծավալը՝ 852 մլն դրամով՝ կազմելով 4166 մլն դրամ: Միաժամանակ, նվազել է մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, կազմելով շուրջ 1016 հազար դրամ՝ ի տարբերություն երկրորդ եռամսյակի ցուցանիշի, որը 1169 հազար դրամ էր: Այդ ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ առևտրային բանկերի կողմից ավելի շատ նախաձեռնվել են հատային փոխանցումներ՝ ՀՏ 100 (վճարման հանձնարարական) և ՀՏ 120 (բյուջեի մուտքի վճարման հանձնարարական): Չնայած էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումները նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են (ծավալը՝ 25.71%-ով, քանակը՝ 44.57%-ով), համակարգում նախաձեռնված ընդհանուր վճարումներում նվազել է անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումների մասնաբաժինը՝ կազմելով ծավալի 0.42%-ը, քանակի՝ 0.012%-ը: Նշված մերժումների մասնաբաժնի նվազումը (ըստ ծավալի՝ 0.03%-ով, ըստ քանակի՝ 0.01%-ով) տեղի է ունեցել առևտրային բանկերի կողմից միջոցների օպտիմալ կառավարման արդյունքում:

| Հաղորդագրության տեսակը | 1999 | 2000 | 2001 | I եռ. 02 | II եռ. 02 | III եռ.02 |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 236 657 | 562 399 | 478 783 | 107 922 | 133 373 | 169 002 |
| Քանակ | 129 508 | 323 511 | 216 563 | 54 296 | 58 261 | 64 515 |
| **ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 64 231 | 112 008 | 118 767 | 28 589 | 31 792 | 46 606 |
| Քանակ | 198 764 | 409 858 | 364 041 | 78 859 | 87 287 | 148 379 |
| **ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 0 | 11 | 14 | 1 | 0.01 | 0.00 |
| Քանակ | 0 | 120 | 27 | 3 | 1 | 0 |
| **ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 0 | 251 | 4 047 | 911 | 1 193 | 1 972 |
| Քանակ | 0 | 6 153 | 112 721 | 26 163 | 29 756 | 42 546 |
| **ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 0 | 140 | 412 | 222 | 200 | 44 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Քանակ | 0 | 65 | 526 | 145 | 67 | 52 |
| **ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 0 | 2 927 | 13 194 | 564 | 33 | 9 |
| Քանակ | 0 | 637 | 749 | 130 | 88 | 66 |
| **ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 0 | 24 257 | 150 299 | 33 742 | 45 506 | 48,986 |
| Քանակ | 0 | 4 288 | 19 430 | 4 659 | 6 041 | 6,843 |
| **Ընդամենը** | | | | | | |
| Գումար *(մլն ՀՀ դրամ)* | 300 888 | 701 993 | 765 515 | 171 950 | 212 097 | 266,620 |
| Քանակ | 328 272 | 744 632 | 714 057 | 164 255 | 181 501 | 262,401 |

## ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել 28 առևտրային բանկեր, ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը:

Թղթային եղանակով վճարումների համակարգով նույնպես շարունակում են իրականացվել խոշոր վճարումներ (մեկ վճարման միջին գումարը կազմում է շուրջ 11834 հազ. ՀՀ դրամ), ինչը մոտ տասը անգամ ավելի է, քան էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով իրականացվող մեկ վճարման միջին գումարը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են (միջինը) վերջիններիս վճարումների ծավալի 5%-ը և քանակի մոտ 0.5%-ը):

Երրորդ եռամսյակում, երկրորդ եռամսյակի համեմատ, թղթային եղանակով իրականացված վճարումների ծավալն ավելացել է 9230 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 42485 մլն ՀՀ դրամ, սակայն քանակը նվազել է 266-ով՝ կազմելով 3590 հատ:

## ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում շահագործման է հանձնվել Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության, մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի շրջանառությունը ապահովող ենթահամակարգը, ինչպես նաև իրականացվել է համակարգից մի շարք հաշվետվությունների ձևավորման խնդիրը: Միաժամանակ իրականացվել են գործող համակարգի ծրագրային մոդուլների շտկման և լրամշակման աշխատանքներ: Ներկայումս մշակվում է պետական արժեթղթերով երկրորդային շուկայում գործառնությունների իրականացումն ապահովող ենթահամակարգը:

2002 թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 13 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Հաշվետու ժամանակահատվածում համակարգի կողմից ձևավորվել է 401 հանձնարարական՝ 17210.5 մլն ՀՀ դրամ ծավալով:

### ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերի գործունեությունը բնութագրող ցուցանիշներ

| Ժամանակա-հատված | Համախառն | | | | Զուտ վճարումների համակարգ | | Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ | | Ընդամենը ԿԲ միջոցով | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային | | թղթային | | | | | | | |
| | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ | Գումար (մլն դրամ) | Քանակ |
| 2001 - I եռ. | 188507 | 163716 | 58991 | 3883 | 853 | 4062 | 15029 | 493 | 263380 | 172154 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 71.6 | 95.1 | 22.4 | 2.3 | 0.3 | 2.4 | 5.7 | 0.3 | 100 | 100 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2001 – II եռ. | 184539 | 170512 | 57633 | 3354 | 451 | 2229 | 18696 | 551 | 261319 | 176646 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 70.6 | 96.5 | 22.1 | 1.9 | 0.2 | 1.3 | 7.2 | 0.3 | 100 | 100 |
| 2001 – III եռ. | 185591 | 190140 | 44912 | 3752 | 897 | 1606 | 17960 | 452 | 249360 | 195950 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 74.4 | 97.0 | 18.0 | 1.9 | 0.4 | 0.8 | 7.2 | 0.2 | 100 | 100 |
| 2001 – IV եռ. | 206878 | 189689 | 68980 | 4649 | 643 | 1321 | 12438 | 261 | 288939 | 195920 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 71.6 | 96.8 | 23.9 | 2.4 | 0.2 | 0.7 | 4.3 | 0.1 | 100 | 100 |
| 2002 – I եռ. | 171950 | 164255 | 43425 | 3948 | 235 | 800 | 16290 | 358 | 231900 | 169361 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 74.1 | 97.0 | 18.7 | 2.3 | 0.1 | 0.5 | 7.0 | 0.2 | 100 | 100 |
| 2002 – II եռ. | 212097 | 181501 | 33255 | 3856 | 65 | 283 | 20592 | 435 | 266009 | 186075 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 79.7 | 97.5 | 12.5 | 2.1 | 0.0 | 0.2 | 7.7 | 0.2 | 100 | 100 |
| 2002 - III եռ. | 266620 | 262401 | 42485 | 3590 | 0 | 0 | 17210 | 401 | 326315 | 266392 |
| տեսակարար կշիռը վճարումներում (%) | 81.73 | 98.5 | 13.0 | 1.35 | 0 | 0 | 5.27 | 0.15 | 100 | 100 |

## «ԱրՔա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգ

2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են «Արմենիան Քարդ» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ ավելացել են «ԱրՔա» պլաստիկ քարտերը սպասարկող ավտոմատ գանձման սարքերը (դրանց թիվը 7-ից հասել է 9-ի), կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերը (153-ից՝ 171-ի): Ավելացել է նաև «ԱրՔա» համակարգին անդամակցող 11 առևտրային բանկերի կողմից թողարկված քարտերի քանակը. կազմել է 10054 հատ (երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ՝ 8374), այդ թվում՝ 468 քարտ վերաթողարկվել է:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ «ԱրՔա» քարտեր սպասարկող սարքավորումների տեղաբաշխվածությունը և 2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի կողմից սպասարկված «ԱրՔա» քարտերի ծավալը և քանակը նկարագրող տվյալներ:

**Քարտերի սպասարկման կետերի քանակը**
*(30.09.2002 դրությամբ)*

| | |
|---|---|
| Ավտոմատ գանձման սարքեր | 9 |
| Կանխիկացման կետ | 50 |
| Առևտրի/սպասարկման կետ | 121 |
| **Ընդամենը** | **180** |

**Քարտեր սպասարկող սարքավորումներով կատարված գործարքներ**
*(2002 թ. III եռամսյակ)*

| | *Գումար (հազար դրամ)* | *Քանակ* |
|---|---|---|
| Ավտոմատ գանձման սարքերի միջոցով | 865769 | 34463 |
| POS – տերմինալների միջոցով | 1019083 | 37151 |
| Իմպրինտերների միջոցով | 223 | 4 |
| Ընդամենը | 1885075 | 71618 |

## ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են կատարվել ՀՀ տարածքում պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների ներդրումը խթանելու ուղղությամբ, որը նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքում մանր վճարումների ոլորտի զարգացման միջոցով: Այդ աշխատանքներում նախատեսվում է ներգրավել առևտրային բանկերի փորձագետներին, ՀՀ պետա-

կան մարմինների և առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներին: ՀՀ տարածքում մանր վճարումների ոլորտի հետագա զարգացման ուղիների վերաբերյալ պատկերացում կազմելու համար մշակվել և ՀՀ տարածքում գործող բանկերին, ՀՀ պետական տարբեր գերատեսչություններին և կենցաղսպասարկման ծառայություն մատուցող և այլ շահագրգիռ կազմակերպություններին տրամադրվել է համապատասխան հարցաշար:

ՀՀ տարածքում վճարահաշվարկային բնագավառը կարգավորող նորմատիվային դաշտի կանոնակարգման հետ կապված՝ 2002 թ. երրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են «Վճարահաշվարկային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակման, ինչպես նաև վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության կանոնակարգման աշխատանքները:

# Մակրոտնտեսական ցուցանիշները 2002 թ. հունվար-սեպտեմբերին

*(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)*

## I. Իրական հատված

| *Անվանում* | *Հունվար - հուլիս* | *Հունվար – օգոստոս* | *Հունվար – սեպտեմբեր* | *2002 թ. հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)* | 562471.8 | 692274.4 | 878527.4 | 111.0 |
| ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)* | 103.3 | 102.9 | 102.5 | - |
| Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)*[1] | 438.6 | 539.7 | 684.8 | 110.5 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)* | 181103.6 | 209204.8 | 240443.6 | 111.0 |
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)* | 3300.0 | 3754.1 | 4146.0 | 94.8 |
| Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)* | 152489.5 | 182947.1 | 246347.5 | 102.8 |
| Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)* | 287171.7 | 338509.5 | 388152.9 | 115.1 |
| Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)* | 56723.6 | 71746.8 | 91352.4 | 133.4 |
| Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)* | 404406.6 | 478303.7 | 553585.3 | 111.3 [2] |
| Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)* | 406254.6 | 479352.7 | 551134.3 | 109.7 [2] |
| Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)* | 25298 | 25587 | 25754 | 109.1 [2] |
| Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)* | 1418.5 | 1418.3 | 1418.0 | - |
| Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)* | 136.0 | 135.6 | 135.1 | - |
| Գործազրկության մակարդակը (%) | 9.6 | 9.6 | 9.5 | - |

## II. Արտաքին հատված

| *Անվանում* | *Հունվար - հուլիս* | *Հունվար – օգոստոս* | *Հունվար – սեպտեմբեր* | *2002 թ. հունվար-սեպտեմբերը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)* |
|---|---|---|---|---|
| Արտահանում *(FOB. մլն ԱՄՆ դոլար)* | 265.2 | 300.6 | 355.4 | 146.0 |
| Ներմուծում *(CIF. մլն ԱՄՆ դոլար)* | 496.6 | 580.5 | 674.3 | 108.1 |
| Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)* | 231.3 | 279.8 | 318.9 | 83.9 |

## III. Գների ինդեքսներ

| *Ժամանակաշրջան* | *Սպառողական գների ինդեքս* | *Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս* | *Գների ինդեքս կապիտալ շինարարությունում* | *Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս* |
|---|---|---|---|---|
| *Նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 102.2 | 102.9 | 101.0 | 101.8 |
| Փետրվար | 99.3 | 100.8 | 99.8 | 95.8 |
| Մարտ | 99.4 | 99.6 | 100.0 | 99.5 |
| Ապրիլ | 102.5 | 99.8 | 99.6 | 98.8 |
| Մայիս | 101.7 | 101.6 | 100.1 | 100.4 |
| Հունիս | 99.5 | 106.1 | 100.2 | 73.3 |
| Հուլիս | 95.0 | 98.3 | 100.0 | 80.6 |
| Օգոստոս | 97.0 | 99.4 | 100.0 | 75.4 |
| Սեպտեմբեր | 99.4 | 99.3 | 100.4 | 94.9 |
| 2002 թ. հունվար-սեպտեմբեր<br>2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ | 101.1 | 103.0 | 104.7 | 103.6 |

## IV. Սղաճ

| *ժամանակաշրջան* | *2000* | *2001* | *2002* | *2002* |
|---|---|---|---|---|
| | *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | *նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)* |
| Հունվար | 1.9 | 4.6 | 2.2 | 2.2 |
| Փետրվար | 0.1 | -0.9 | -0.7 | 1.5 |
| Մարտ | -0.4 | 0.0 | -0.6 | 0.9 |
| Ապրիլ | -0.8 | -0.1 | 2.5 | 3.4 |
| Մայիս | -0.3 | 1.6 | 1.7 | 5.2 |
| Հունիս | -0.3 | -1.3 | -0.5 | 4.6 |
| Հուլիս | -2.0 | -2.7 | -5.0 | -0.6 |
| Օգոստոս | -1.3 | -0.7 | -3.0 | -3.6 |
| Սեպտեմբեր | 0.3 | -1.2 | -0.6 | -4.2 |
| Հոկտեմբեր | 0.0 | 0.1 | | |
| Նոյեմբեր | 0.9 | 1.2 | | |
| Դեկտեմբեր | 2.4 | 2.4 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)* | 0.4 | 2.9 | | |
| Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)* | -0.8 | 3.1 | | |

*[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:*

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

*(մլն ՀՀ դրամ)*

| *ժամանակաշրջան* | **Պահանջներ Կառավարության նկատմամբ** | | | | **Կառավարության ավանդներ** | | | | | | *Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]* | *Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[3]* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կենտրոնական բանկի պահուստային դրամական միջոցներում Կառավարության ավանդներ | Կենտրոնական բանկի պարտատոմսերում Կառավարության ներդրումներ | Կենտրոնական բանկի այլ պահանջներ Կառավարության նկատմամբ | Ընդամենը | Կենտրոնական բանկում Կառավարության հաշիվներ | Կենտրոնական բանկում առևտրային բանկերի հաշիվներ | ՕԻԳ-երի միջոցներ կրկնակի | ՕԻԳ-երի միջոցներ առևտրային բանկերում | ՀՀ սուբյեկտների միջոցներ Կառավարության հիմնադրամում | Ընդամենը | | |
| ***2001*** | | | | | | | | | | | | |
| Դեկտեմբեր | 1444 | 8838 | -92 | 10190 | 1739 | 142 | 6 | 0 | 36 | 1922 | 8268 | ***8478*** |
| ***2002*** | | | | | | | | | | | | |
| Հունվար | 1164 | 7577 | -51 | 8690 | 13895 | 142 | 6 | 0 | 8 | 14051 | -5360 | ***-5100*** |
| Փետրվար | 958 | 7381 | -37 | 8301 | 7562 | 141 | 6 | 0 | 9 | 7720 | 581 | ***747*** |
| Մարտ | 754 | 6741 | -26 | 7469 | 8151 | 128 | 7 | 0 | 37 | 8322 | -854 | ***-710*** |
| Ապրիլ | 678 | 6451 | -17 | 7112 | 6853 | 127 | 8 | 0 | 0.5 | 6988 | 124 | ***348*** |
| Մայիս | 594 | 5795 | -9 | 6380 | 8490 | 127 | 17 | 0 | 3 | 8637 | -2257 | ***-2155*** |
| Հունիս | 216 | 5611 | -2 | 5825 | 10135 | 126 | 13 | 0 | 0.1 | 10274 | -4450 | ***-4368*** |
| Հուլիս | 0 | 4490 | 0 | 4490 | 5373 | 145 | 17 | 0 | 0.0 | 5536 | -1046 | ***-905*** |
| Օգոստոս | 0 | 3977 | 0 | 3977 | 9974 | 144 | 14 | 0 | 0.0 | 10132 | -6155 | ***-6079*** |
| Սեպտեմբեր | 0 | 3929 | 0 | 3929 | 15061 | 150 | 13 | 0 | 0.0 | 15224 | -11295 | ***-11233*** |

*[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

*[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:*

*[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

## ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 01 | Հ - 02 | Փ - 02 | Մ - 02 | Ա - 02 | Մ - 02 | Հ – 02 | Հ – 02 | Օ - 02 | Ս - 02 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** [1,2] | ***84908*** | ***91157*** | ***84532*** | ***81764*** | ***79629*** | ***80753*** | ***84002*** | ***84408*** | ***87192*** | ***94867*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-4539*** | ***-19316*** | ***-11676*** | ***-9406*** | ***-3904*** | ***-7952*** | ***-9592*** | ***-8032*** | ***-8723*** | ***-14439*** |
| Կառավարություն | 8268 | -5361 | 581 | -854 | 124 | -2257 | -4449 | -1046 | -6155 | -11295 |
| Կենտրոնական կառավարություն | 8304 | -5353 | 590 | -817 | 124 | -2254 | -4449 | -1046 | -6155 | -11295 |
| այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ | -36 | -8 | -9 | -37 | 0 | -3 | 0 | 0 | 0 | 0 |
| Բանկեր | 3855 | 1920 | 3807 | 6558 | 7298 | 7430 | 7559 | 7495 | 11666 | 9698 |
| այդ թվում՝ ռեպո համաձայն. | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2363 | 0 |
| ավանդներ (-) | -50 | -1680 | -860 | -800 | -45 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ այլ ակտիվներ | -16662 | -15875 | -16064 | -15110 | -11326 | -13125 | -12702 | -14481 | -14234 | -12842 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** [3] | ***79939*** | ***74045*** | ***74683*** | ***74836*** | ***75072*** | ***75532*** | ***76280*** | ***78197*** | ***80504*** | ***84810*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***80369*** | ***71841*** | ***72856*** | ***72358*** | ***75725*** | ***72801*** | ***74410*** | ***76376*** | ***78469*** | ***80428*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ | 66692 | 58080 | 60305 | 60785 | 60814 | 61647 | 61787 | 64430 | 65067 | 68690 |
| Պարտադիր պահուստ. (դրամով) | 13489 | 13528 | 12295 | 11251 | 14674 | 10913 | 12368 | 11693 | 12954 | 11475 |
| Այլ հաշիվներ | 188 | 233 | 256 | 322 | 237 | 241 | 255 | 253 | 448 | 263 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***6249*** | ***-6625*** | ***-2768*** | ***-2135*** | ***1124*** | ***3249*** | ***406*** | ***2784*** | ***7675*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-14777*** | ***7640*** | ***2270*** | ***5502*** | ***-4048*** | ***-1640*** | ***1560*** | ***-691*** | ***-5716*** |
| Կառավարություն | - | -13629 | 5942 | -1435 | 978 | -2381 | -2192 | 3403 | -5109 | -5140 |
| Կենտրոնական կառավարություն | - | -13657 | 5943 | -1407 | 941 | -2378 | -2195 | 3403 | -5109 | -5140 |
| այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ | - | -28 | 1 | 28 | -37 | 3 | -3 | 0 | 0 | 0 |
| Բանկեր | - | -1935 | 1887 | 2751 | 740 | 132 | 129 | -64 | 4171 | -1968 |
| այդ թվում՝ ռեպո համաձայն. | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2363 | -2363 |
| ավանդներ (-) | - | 1630 | -820 | -60 | -755 | -45 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 787 | -189 | 954 | 3784 | -1799 | 423 | -1779 | 247 | 1392 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** [3] | ***-*** | ***-5894*** | ***638*** | ***153*** | ***236*** | ***460*** | ***748*** | ***1918*** | ***2306*** | ***4306*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***-*** | ***-8528*** | ***1015*** | ***-498*** | ***3367*** | ***-2924*** | ***1609*** | ***1966*** | ***2093*** | ***1959*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ | - | -8612 | 2225 | 480 | 29 | 833 | 140 | 2643 | 637 | 3623 |
| Պարտադիր պահուստ. (դրամով) | - | 39 | -1233 | -1044 | 3423 | -3761 | 1455 | -675 | 1261 | -1479 |
| Այլ հաշիվներ | - | 45 | 23 | 66 | -85 | 4 | 14 | -2 | 195 | -185 |
| *(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***7.4*** | ***-7.3*** | ***-3.3*** | ***-2.6*** | ***1.4*** | ***4.0*** | ***0.5*** | ***3.3*** | ***8.8*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***326*** | ***-39.6*** | ***-19.4*** | ***-58.5*** | ***103.7*** | ***20.6*** | ***-16.3*** | ***8.6*** | ***65.5*** |
| Կառավարություն | - | -164.8 | 110.8 | -247.0 | 114.5 | -1920 | 97.1 | -76.5 | 488.4 | 83.5 |
| այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բանկեր | - | -50.2 | 98.3 | 72.3 | 11.3 | 1.8 | 1.7 | -0.8 | 55.7 | -16.9 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -4.7 | 1.2 | -5.9 | 25.0 | 15.9 | -3.2 | 14.0 | -1.7 | -9.8 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված)*** [3] | ***-*** | ***-7.4*** | ***0.9*** | ***0.2*** | ***0.3*** | ***0.6*** | ***1.0*** | ***2.5*** | ***2.9*** | ***5.3*** |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱՄ*** | ***-*** | ***-10.6*** | ***1.4*** | ***-0.7*** | ***4.7*** | ***-3.9*** | ***2.2*** | ***2.6*** | ***2.7*** | ***2.5*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ | - | -12.9 | 3.8 | 0.8 | 0.05 | 1.4 | 0.2 | 4.3 | 1.0 | 5.6 |
| Պարտադիր պահուստ. (դրամով) | - | 0.3 | -9.1 | -8.5 | 30.4 | -25.6 | 13.3 | -5.5 | 10.8 | -11.4 |
| Այլ հաշիվներ | - | 23.9 | 9.9 | 25.8 | -26.4 | 1.7 | 5.8 | -0.8 | 77.1 | -41.3 |

*[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

*[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկին = 276.5 ԱՄՆ դոլար:*

*[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:*

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1,2]

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 01 | Հ - 02 | Փ - 02 | Մ - 02 | Ա - 02 | Մ - 02 | Հ - 02 | Հ - 02 | Օ - 02 | Ս - 02 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)** | **-3498** | **3200** | **2876** | **2727** | **4211** | **7508** | **10677** | **13658** | **15823** | **17242** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 55176 | 54053 | 54588 | 60237 | 57105 | 58750 | 67038 | 75386 | 68942 | 73013 |
| Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով | -55274 | -47308 | -48187 | -54227 | -50039 | -48825 | -52994 | -58914 | -50259 | -53135 |
| Արտաքին պարտավորություններ դրամով | -3400 | -3546 | -3525 | -3282 | -2854 | -2417 | -3367 | -2814 | -2859 | -2636 |
| **ԶՆԱ** | 96425 | 89411 | 87335 | 88124 | 86951 | 85168 | 85401 | 83780 | 84733 | 93953 |
| Կառավարություն | 1129 | 3801 | 4255 | 3238 | 3678 | 4448 | 4322 | 5101 | 6161 | 6159 |
| Կենտրոնական կառավարություն | 1186 | 3912 | 4360 | 3313 | 3772 | 4544 | 4423 | 5181 | 6238 | 6271 |
| Տեղական կառավարման մարմիններ | -58 | -111 | -105 | -75 | -95 | -96 | -102 | -80 | -77 | -112 |
| Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ | 10744 | 13285 | 10285 | 6265 | 8438 | 4966 | 6590 | 6173 | 2553 | 3586 |
| Պահուստային ակտիվներ | 14717 | 16909 | 14990 | 13304 | 15822 | 12472 | 14262 | 13738 | 14323 | 13436 |
| Պարտավորություններ ԿԲ նկատմամբ | -3973 | -3624 | -4705 | -7039 | -7384 | -7507 | -7672 | -7565 | -11769 | -9851 |
| Տնտեսություն | 96856 | 81539 | 83782 | 86554 | 86596 | 88019 | 88441 | 86903 | 88923 | 95459 |
| Ձեռնարկություններ | 60984 | 56175 | 57136 | 58485 | 59590 | 60583 | 61058 | 59755 | 61623 | 67488 |
| Դրամով | 18202 | 17450 | 17182 | 17390 | 17810 | 18104 | 17337 | 17687 | 18209 | 21003 |
| Արտարժույթով | 42783 | 38725 | 39954 | 41095 | 41780 | 42479 | 43721 | 42069 | 43413 | 46485 |
| Տնտեսության այլ հատվածներ | 35871 | 25363 | 26647 | 28069 | 27005 | 27437 | 27383 | 27148 | 27300 | 27970 |
| Դրամով | 4195 | 3948 | 4513 | 5171 | 4785 | 5335 | 6064 | 6516 | 6675 | 7198 |
| Արտարժույթով | 33076 | 22815 | 23533 | 24248 | 23573 | 23465 | 22682 | 21996 | 22008 | 22167 |
| Ջուտ այլ ակտիվներ | -12304 | -9213 | -10987 | -7933 | -11761 | -12265 | -13952 | -14397 | -12905 | -11250 |
| Արտաքին ակտիվներ դրամով | 124 | 125 | 168 | 102 | 106 | 66 | 93 | 94 | 81 | 80 |
| Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով) | 1433 | 1246 | 791 | 5748 | 5375 | 1340 | 1412 | 1348 | 1465 | 1457 |
| Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) | -477 | -148 | -30 | -4836 | -4638 | -275 | -76 | -54 | -39 | -16 |
| Ստորադաս վարկեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Միջբանկային պահանջներ[3] | 9178 | 6427 | 5738 | 6040 | 4991 | 3777 | 3356 | 5088 | 3885 | 4229 |
| Այլ ակտիվներ | 30253 | 29930 | 30898 | 32527 | 31424 | 33336 | 30172 | 31281 | 30373 | 30599 |
| Միջբանկային պարտավորություններ[4] | -7274 | -5017 | -4041 | -4425 | -2447 | -2692 | -2857 | -4840 | -3370 | -3726 |
| Դրամական շուկայի գործիքներ | -90 | -91 | -92 | -93 | -94 | -95 | -96 | -97 | -98 | -99 |
| Ներդրումներ փայաբաժիններում | 369 | 368 | 368 | 368 | 357 | 357 | 358 | 305 | 230 | 230 |
| Ստորադաս պարտավորություններ ռեզիդենտներին | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կապիտալ հաշիվներ | -38202 | -34925 | -35359 | -36411 | -36983 | -39335 | -37095 | -36996 | -35019 | -33094 |
| Ջուտ ներբանկային հաշիվներ | 332 | 327 | 374 | 409 | 319 | 42 | 196 | -279 | 77 | 190 |
| Այլ պարտավորություններ | -7985 | -7457 | -9802 | -7364 | -10170 | -8787 | -9415 | -10247 | -10489 | -11099 |
| **ԱՎԱՆԴՆԵՐ[6]** | **92927** | **92611** | **90211** | **90852** | **91162** | **92675** | **96077** | **97438** | **100556** | **111195** |
| Այդ թվում՝ սառեցված ավանդներ | 8381 | 7946 | 7141 | 6392 | 5737 | 5549 | 5472 | 5285 | 5226 | 5384 |
| Դրամով ավանդներ[6] | 18420 | 19554 | 20416 | 20082 | 20854 | 21469 | 22398 | 21877 | 20930 | 28037 |
| Ցպահանջ ավանդներ[5,6] | 12073 | 12067 | 12421 | 12380 | 13286 | 13593 | 14983 | 14654 | 14103 | 17398 |
| Ժամկետային ավանդներ[6] | 6347 | 7487 | 7995 | 7702 | 7568 | 7876 | 7415 | 7223 | 6827 | 10639 |
| Այդ թվում՝ սառեցված ավանդներ՝ դրամով | 916 | 841 | 754 | 692 | 663 | 658 | 658 | 652 | 650 | 633 |
| Ավանդներ արտարժույթով[6] | 74506 | 73057 | 69795 | 70770 | 70308 | 71206 | 73679 | 75561 | 79626 | 83158 |
| Ցպահանջ ավանդներ[6] | 26516 | 32678 | 30001 | 32488 | 32669 | 32540 | 35911 | 36970 | 37700 | 38199 |
| Ժամկետային ավանդներ[6] | 47400 | 39830 | 39283 | 37801 | 37163 | 38196 | 37426 | 38224 | 41521 | 44542 |
| Այդ թվում՝ սառեցված ավանդներ արտարժ. | 7465 | 7106 | 6386 | 5700 | 5074 | 4891 | 4815 | 4633 | 4576 | 4751 |
| Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ | 590 | 548 | 510 | 481 | 475 | 470 | 342 | 368 | 404 | 418 |

*[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:*

*[2] Բոլոր դասակարգումներն իրականացված են ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան, յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:*

*[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:*

*[4] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:*

*[5] Ընդգրկված են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:*

*[6] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:*

## ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

*(մլն ՀՀ դրամ)*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Դ - 01 | Հ - 02 | Փ - 02 | Մ - 02 | Ա - 02 | Մ - 02 | Հ - 02 | Հ - 02 | Օ - 02 | Ս - 02 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ***[2,3] | ***81410*** | ***94357*** | ***87408*** | ***84491*** | ***83840*** | ***88261*** | ***94679*** | ***98066*** | ***103015*** | ***112109*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***76741*** | ***54324*** | ***60836*** | ***65545*** | ***66268*** | ***64293*** | ***61321*** | ***61964*** | ***61416*** | ***65793*** |
| Կառավարություն | 9396 | -1559 | 4836 | 2384 | 3801 | 2191 | -128 | 4056 | 6 | -5136 |
| Կենտրոնական կառավարություն | 9490 | -1440 | 4950 | 2496 | 3896 | 2290 | -26 | 4136 | 83 | -5024 |
| ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ | -36 | -8 | -9 | -37 | 0 | -3 | 0 | 0 | 0 | 0 |
| Տեղական կառավարման մարմիններ | -58 | -111 | -105 | -75 | -95 | -96 | -102 | -80 | -77 | -112 |
| Տնտեսություն[4] | 97028 | 81560 | 83801 | 86573 | 86613 | 88036 | 88457 | 86921 | 88945 | 95482 |
| Չեռնարկ. և կազմակերպ. | 61132 | 56175 | 57136 | 58485 | 59590 | 60583 | 61058 | 59755 | 61623 | 67488 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 2549 | 2235 | 2269 | 2359 | 2406 | 2546 | 2591 | 2464 | 2553 | 1561 |
| Տնտեսության այլ ճյուղեր | 35896 | 25385 | 26666 | 28088 | 27023 | 27453 | 27399 | 27166 | 27322 | 27994 |
| որից՝ կուտակված տոկոսներ | 859 | 787 | 769 | 745 | 610 | 536 | 470 | 462 | 484 | 118 |
| Զուտ այլ ակտիվներ | -29683 | -25677 | -27801 | -23412 | -24146 | -25934 | -27008 | -29013 | -27535 | -24553 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ***[5,8] | ***83429*** | ***75362*** | ***78143*** | ***78898*** | ***79519*** | ***81046*** | ***82045*** | ***84201*** | ***84368*** | ***94460*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտ. տոկոս.)* | ***157345*** | ***147894*** | ***147454*** | ***149243*** | ***149359*** | ***151785*** | ***155384*** | ***159412*** | ***163793*** | ***177216*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ*** *(առանց սառեցված հաշ.)* | ***148964*** | ***139947*** | ***140313*** | ***142850*** | ***143622*** | ***146236*** | ***149912*** | ***154127*** | ***158567*** | ***171832*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ***[6,8] | ***158151*** | ***148681*** | ***148244*** | ***150036*** | ***150108*** | ***152554*** | ***156000*** | ***160030*** | ***164431*** | ***177902*** |
| Շրջանառությունում կանխիկ դրամ | 65037 | 55839 | 57778 | 58862 | 58709 | 59638 | 59668 | 62338 | 63427 | 66444 |
| Ցպահանջ ավանդներ[7,8] | 12260 | 12276 | 12650 | 12647 | 13516 | 13831 | 15236 | 14890 | 14348 | 17645 |
| Այդ թվում՝ սառեցված | 837 | 776 | 706 | 653 | 641 | 640 | 650 | 644 | 642 | 625 |
| կուտակված տոկոսներ | 184 | 195 | 209 | 220 | 185 | 184 | 157 | 148 | 161 | 165 |
| Ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդ. | 80855 | 80566 | 77816 | 78527 | 77883 | 79085 | 81096 | 82802 | 86657 | 93814 |
| Այդ թվում՝ սառեցված | 7544 | 7171 | 6435 | 5740 | 5096 | 4909 | 4822 | 4641 | 4584 | 4759 |
| կուտակված տոկոսներ | 622 | 592 | 581 | 573 | 564 | 585 | 459 | 470 | 477 | 521 |
| Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ[8] | 74507 | 73080 | 69821 | 70826 | 70315 | 71209 | 73681 | 75579 | 79830 | 83175 |
| Ցպահանջ[8] | 26518 | 32701 | 30028 | 32544 | 32676 | 32543 | 35912 | 36987 | 37904 | 38215 |
| Ժամկետային[8] | 47400 | 39830 | 39283 | 37801 | 37163 | 38196 | 37426 | 38224 | 41521 | 44542 |
| Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ. | 7465 | 7106 | 6387 | 5701 | 5074 | 4891 | 4814 | 4632 | 4576 | 4751 |
| Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ | 590 | 548 | 510 | 481 | 475 | 470 | 342 | 368 | 404 | 418 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***12947*** | ***-6949*** | ***-2917*** | ***-651*** | ***4421*** | ***6418*** | ***3387*** | ***4949*** | ***9094*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***-*** | ***-22417*** | ***6512*** | ***4709*** | ***723*** | ***-1975*** | ***-2972*** | ***643*** | ***-548*** | ***4377*** |
| Կառավարություն | - | -10955 | 6395 | -2452 | 1417 | -1610 | -2319 | 4184 | -4050 | -5142 |
| Կենտրոնական կառավարություն | - | -10930 | 6390 | -2454 | 1400 | -1606 | -2316 | 4162 | -4053 | -5107 |
| ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ | - | -28 | 1 | 28 | -37 | 3 | -3 | 0 | 0 | 0 |
| Տեղական կառավարման մարմիններ | - | 53 | -6 | -30 | 20 | 1 | 6 | -22 | -3 | -35 |
| Տնտեսություն | - | -15468 | 2241 | 2772 | 40 | 1423 | 421 | -1536 | 2024 | 6537 |
| Չեռնարկ. և կազմակերպ. | - | -4890 | 968 | 1351 | 1092 | 1008 | 480 | -1303 | 1868 | 5865 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | -248 | 43 | 92 | 33 | 155 | 50 | -127 | 89 | -992 |
| Տնտեսության այլ ճյուղեր | - | -10578 | 1273 | 1421 | -1052 | 415 | -59 | -233 | 156 | 672 |
| որից՝ կուտակված տոկոսներ | - | -178 | -27 | -3 | -122 | -94 | -86 | -8 | 22 | -366 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 4006 | -2124 | 4389 | -734 | -1788 | -1074 | -2005 | 1478 | 2982 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ*** | ***-*** | ***-8067*** | ***2781*** | ***755*** | ***621*** | ***1527*** | ***999*** | ***2156*** | ***167*** | ***10092*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտ. տոկոս.)* | ***-*** | ***-9451*** | ***-440*** | ***1789*** | ***116*** | ***2426*** | ***3599*** | ***4028*** | ***4381*** | ***13423*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ*** *(առանց սառեցված հաշ.)* | ***-*** | ***-9017*** | ***366*** | ***2537*** | ***772*** | ***2614*** | ***3676*** | ***4215*** | ***4440*** | ***13265*** |
| ***ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ*** | ***-*** | ***-9470*** | ***-437*** | ***1792*** | ***72*** | ***2446*** | ***3446*** | ***4030*** | ***4401*** | ***13471*** |
| Շրջանառությունում կանխիկ դրամ | - | -9198 | 1939 | 1084 | -153 | 929 | 30 | 2670 | 1089 | 3017 |
| Ցպահանջ ավանդներ | - | 16 | 374 | -3 | 869 | 315 | 1405 | -346 | -542 | 3297 |
| Այդ թվում՝ սառեցված | - | -61 | -70 | -53 | -12 | -1 | 10 | -6 | -2 | -17 |
| կուտակված տոկոսներ | - | 11 | 14 | 11 | -35 | -1 | -27 | -9 | 13 | 4 |
| Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ. | - | -289 | -2750 | 711 | -644 | 1202 | 2011 | 1706 | 3855 | 7157 |
| Այդ թվում՝ սառեցված | - | -373 | -736 | -695 | -644 | -187 | -87 | -181 | -57 | 175 |
| կուտակված տոկոսներ | - | -30 | -11 | -8 | -9 | 21 | -126 | 11 | 7 | 44 |
| Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ | - | -1427 | -3259 | 1005 | -511 | 894 | 2472 | 1898 | 4251 | 3345 |
| Ցպահանջ | - | 6183 | -2673 | 2516 | 132 | -133 | 3369 | 1075 | 917 | 311 |
| Ժամկետային | - | -7570 | -547 | -1482 | -638 | 1033 | -770 | 798 | 3297 | 3021 |
| Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ. | - | -359 | -719 | -686 | -627 | -183 | -77 | -182 | -56 | 175 |
| Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ | - | -42 | -38 | -29 | -6 | -5 | -128 | 26 | 36 | 14 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***15.9*** | ***-7.4*** | ***-3.3*** | ***-0.8*** | ***5.3*** | ***7.3*** | ***3.6*** | ***5.0*** | ***8.8*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | **-** | ***-29.2*** | ***12.0*** | ***7.7*** | ***1.1*** | ***-3.0*** | ***-4.6*** | ***1.0*** | ***-0.9*** | ***7.1*** |
| Կենտրոնական կառավարություն | - | 115.2 | 443.8 | -49.6 | 56.1 | -41.2 | -101.1 | 16008 | -98.0 | -6153.0 |
| Տնտեսություն | - | -15.9 | 2.7 | 3.3 | 0.0 | 1.6 | 0.5 | -1.7 | 2.3 | 7.3 |
| Չեռնարկ. և կազմակերպ. | - | -8.0 | 1.7 | 2.4 | 1.9 | 1.7 | 0.8 | -2.1 | 3.1 | 9.5 |
| Տնտեսության այլ ճյուղեր | - | -29.5 | 5.0 | 5.3 | -3.8 | 1.5 | -0.2 | -0.9 | 0.6 | 2.5 |
| Զուտ այլ ակտիվներ | - | -13.5 | 8.3 | -15.8 | 3.1 | 7.4 | 4.1 | 7.4 | -5.1 | -10.8 |
| ***ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ*** | **-** | ***-9.7*** | ***3.7*** | ***1.0*** | ***0.8*** | ***1.9*** | ***1.2*** | ***2.6*** | ***0.2*** | ***12.0*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** *(առանց կուտ. տոկոս.)* | **-** | ***-6.0*** | ***-0.3*** | ***1.2*** | ***0.1*** | ***1.6*** | ***2.4*** | ***2.6*** | ***2.7*** | ***8.2*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** *(առանց սառեցված հաշ.)* | **-** | ***-6.1*** | ***0.3*** | ***1.8*** | ***0.5*** | ***1.8*** | ***2.5*** | ***2.8*** | ***2.9*** | ***8.4*** |
| ***ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ*** | **-** | ***-6.0*** | ***-0.3*** | ***1.2*** | ***0.0*** | ***1.6*** | ***2.3*** | ***2.6*** | ***2.8*** | ***8.2*** |
| Շրջանառությունում կանխիկ դրամ | **-** | -14.1 | 3.5 | 1.9 | -0.3 | 1.6 | 0.1 | 4.5 | 1.7 | 4.8 |
| Ցպահանջ ավանդներ | - | 0.1 | 3.0 | 0.0 | 6.9 | 2.3 | 10.2 | -2.3 | -3.6 | 23.0 |
| Այդ թվում՝ սառեցված | - | 6.0 | 7.2 | 5.3 | -15.9 | -0.5 | -14.7 | -5.7 | 8.8 | 2.5 |
| ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդներ | - | -0.4 | -3.4 | 0.9 | -0.8 | 1.5 | 2.5 | 2.1 | 4.7 | 8.3 |
| Այդ թվում՝ սառեցված | - | -4.8 | -1.9 | -1.4 | -1.6 | 3.7 | -21.5 | 2.4 | 1.5 | 9.2 |
| Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ | - | -1.9 | -4.5 | 1.4 | -0.7 | 1.3 | 3.5 | 2.6 | 5.6 | 4.2 |
| Ցպահանջ | - | 23.3 | -8.2 | 8.4 | 0.4 | -0.4 | 10.4 | 3.0 | 2.5 | 0.8 |
| ժամկետային | - | -16.0 | -1.4 | -3.8 | -1.7 | 2.8 | -2.0 | 2.1 | 8.6 | 7.3 |
| Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ. | - | -4.8 | -10.1 | -10.7 | -11.0 | -3.6 | -1.6 | -3.8 | -1.2 | 3.8 |

*[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:*

*[2] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով. առևտրային բանկերի ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքով:*

*[3] Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկին = 276.5 ԱՄՆ դոլար:*

*[4] 2002 թ. հունվարից ԿԲ «Ներդրումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց կապիտալում» հաշիվը տնտեսության պահանջներից վերադասակարգված է այլ ակտիվներում, որի պատճառով տնտեսության նկատմամբ պահանջների՝ հունվարից ապրիլ ամիսների ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:*

*[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):*

*[6] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*

*[7] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:*

*[8] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

*(մլն ԱՄՆ դոլար)*

| **Անվանումը** | **2001[4]** | **2002** | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս |
| **Համախառն միջազգային պահուստներ** *(առանց սեփականաշն. միջոցների)* | 329.6 | 337.2 | 324.0 | 319.9 | 317.2 | 322.5 | 330.3 | 328.5 | 335.5 | 350.5 |
| **Համախառն միջազգային պահուստներ** | 333.2 | 340.8 | 327.6 | 323.6 | 319.8 | 325.2 | 333.6 | 331.9 | 335.8 | 350.8 |
| Ոսկի[2] | 12.4 | 12.6 | 13.2 | 13.5 | 13.8 | 14.6 | 14.3 | 13.7 | 13.9 | 14.4 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 10.2 | 8.4 | 6.1 | 6.1 | 4.1 | 4.0 | 1.9 | 0.1 | 9.6 | 9.2 |
| Արտարժույթ[3] | 310.6 | 319.8 | 308.3 | 304.0 | 302.0 | 306.6 | 317.3 | 318.1 | 312.3 | 327.3 |
| ***Համախառն միջազգային պահուստներ*** *(առանց սեփականաշն. միջոցների)*[5] | ***331.2*** | ***338.6*** | ***325.3*** | ***321.3*** | ***318.6*** | ***323.8*** | ***331.5*** | ***329.7*** | ***336.7*** | ***351.6*** |

*[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

*[2] ՀՀ ԿԲ ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվներում առկա ոսկու մնացորդը վերադասակարգված է և հանված է «Արտարժույթ»-ից՝ ներառվելով «Ոսկու» մեջ, որի պատճառով սույն հրատարակման «Ոսկի» և «Արտարժույթ» տողերի մնացորդները տարբերվում են նախորդ թողարկումների համապատասխան ցուցանիշներից:*

*[3] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

*[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են 2001 թ. դեկտեմբեր, 2002 թ. հունվար և փետրվար ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

*[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

| Ցուցանիշներ | 2001[4] | 2002 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս |
| ***Վարկեր*** [2] | | | | | | | | | | |
| Իրավաբանական անձանց | | | | | | | | | | |
| ՀՀ դրամով | 27.5 | 23.4 | 20.0 | 24.3 | 19.9 | 19.3 | 24.1 | 27.0 | 27.7 | 12.5 |
| ԱՄՆ դոլարով | 20.3 | 28.6 | 20.7 | 17.3 | 15.6 | 21.9 | 20.5 | 20.4 | 23.0 | 20.1 |
| Ֆիզիկական անձանց | | | | | | | | | | |
| ՀՀ դրամով | 30.2 | 29.8 | 29.3 | 28.0 | 28.4 | 28.1 | 27.5 | 27.7 | 26.6 | 28.7 |
| ԱՄՆ դոլարով | 35.5 | 37.1 | 34.0 | 37.1 | 36.3 | 36.5 | 37.3 | 36.4 | 36.5 | 35.7 |
| ***Ավանդներ*** [2] | | | | | | | | | | |
| Իրավաբանական անձանցից | | | | | | | | | | |
| ՀՀ դրամով | 15.0 | 10.0 | 12.0 | 13.0 | 9.6 | 11.0 | 12.0 | 8.8 | 6.5 | 12.1 |
| ԱՄՆ դոլարով | 9.7 | 4.0 | 14.0 | 6.7 | 10.1 | 9.0 | 6.9 | 6.6 | 6.3 | 6.0 |
| Ֆիզիկական անձանցից | | | | | | | | | | |
| ՀՀ դրամով | 14.6 | 11.9 | 9.8 | 10.2 | 11.8 | 11.8 | 11.8 | 12.0 | 12.2 | 11.8 |
| ԱՄՆ դոլարով | 10.8 | 9.3 | 7.1 | 9.3 | 8.5 | 10.9 | 7.5 | 8.5 | 8.6 | 6.8 |
| ***ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը*** | 15.0 | 14.0 | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 |
| ***ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը*** | 8.0 | 8.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 |
| ***ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը*** | 30.0 | 30.0 | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 |
| ***Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը*** [3] | 16.4 | 14.3 | 13.8 | 13.0 | 14.1 | 14.3 | 15.0 | 15.6 | 15.7 | 14.9 |
| ***Սղաճ*** | 2.9 | 2.2 | -0.7 | -0.6 | 2.5 | 1.7 | -0.5 | -5.0 | -3.0 | -0.6 |

*[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*
*[2] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:*
*[3] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:*
*[4] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:*

## ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

| | *Մինչև 7 օր* | | *8-14 օր* | | *15-28 օր* | | *28 օր և ավելի* | | *Ընդամենը* | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մլն դրամ | % | մլն դրամ | % | մլն դրամ | % | մլն դրամ | % | *մլն դրամ* | *%* |
| ***Հունվար*** | 3077.086 | 15.45 | 505.21 | 12.55 | 163.88 | 15.05 | 127.42 | 13.74 | ***3873.596*** | ***15.00*** |
| MAX | | 18.00 | | 16.00 | | 15.50 | | 14.00 | | ***18.00*** |
| MIN | | 12.00 | | 12.00 | | 14.00 | | 13.50 | | ***12.00*** |
| STDEV | | 1.36 | | 1.31 | | 0.61 | | 0.18 | | ***1.43*** |
| ***Փետրվար*** | 2676.022 | 11.06 | 270.219 | 12.26 | 360.095 | 13.83 | 128.692 | 11.00 | ***3435.028*** | ***11.45*** |
| MAX | | 15.00 | | 13.50 | | 14.00 | | 11.00 | | ***15.00*** |
| MIN | | 8.00 | | 10.00 | | 13.00 | | 11.00 | | ***8.00*** |
| STDEV | | 2.32 | | 1.49 | | 0.46 | | | | ***2.15*** |
| ***Մարտ*** | 5161.532 | 10.55 | 611.931 | 10.96 | 905.193 | 10.64 | | | ***6678.656*** | ***10.60*** |
| MAX | | 12.00 | | 12.00 | | 12.00 | | | | ***12.00*** |
| MIN | | 8.00 | | 10.00 | | 10.00 | | | | ***8.00*** |
| STDEV | | 1.11 | | 0.72 | | 0.64 | | | | ***0.99*** |
| ***Ապրիլ*** | 6407.189 | 11.64 | 890.706 | 13.33 | 509.012 | 12.00 | 228.888 | 11.67 | ***8035.795*** | ***11.85*** |
| MAX | | 15.00 | | 15.00 | | 12.00 | | 12.00 | | ***15.00*** |
| MIN | | 9.50 | | 11.00 | | 12.00 | | 11.50 | | ***9.50*** |
| STDEV | | 1.00 | | 1.53 | | - | | 0.35 | | ***1.18*** |
| ***Մայիս*** | 4391.466 | 11.25 | 1339.203 | 11.12 | 355.184 | 11.43 | 165.48 | 12.00 | ***6251.333*** | ***11.25*** |
| MAX | | 13.00 | | 12.00 | | 12.00 | | 12.00 | | ***13.00*** |
| MIN | | 9.00 | | 10.00 | | 11.00 | | 12.00 | | ***9.00*** |
| STDEV | | 0.98 | | 0.74 | | 0.34 | | - | | ***0.87*** |
| ***Հունիս*** | 5914.959 | 12.30 | 1063.687 | 12.58 | 165.127 | 13.68 | 570.222 | 10.87 | ***7713.995*** | ***12.26*** |
| MAX | | 18.00 | | 15.00 | | 14.00 | | 12.50 | | ***18.00*** |
| MIN | | 8.00 | | 10.00 | | 13.00 | | 10.00 | | ***8.00*** |
| STDEV | | 2.24 | | 1.42 | | 0.71 | | 0.95 | | ***2.09*** |
| ***Հուլիս*** | 13691.94 | 13.90 | 557.39 | 11.35 | 49.55 | 14.00 | 843.878 | 10.85 | ***15,142.76*** | ***13.64*** |
| MAX | | 18.00 | | 12.00 | | 14.00 | | 12.25 | | ***18.00*** |
| MIN | | 10.00 | | 10.50 | | 14.00 | | 10.25 | | ***10.00*** |
| STDEV | | 1.73 | | 0.77 | | | | 0.77 | | ***1.86*** |
| ***Օգոստոս*** | 9,864.32 | 15.33 | 465.10 | 17.32 | 571.03 | 15.05 | 397.30 | 10.54 | ***11,297.75*** | ***15.23*** |
| MAX | | 25.00 | | 25.00 | | 16.00 | | 11.00 | | ***25.00*** |
| MIN | | 9.00 | | 12.00 | | 14.00 | | 10.00 | | ***9.00*** |
| STDEV | | 3.46 | | 5.08 | | 1.00 | | 0.41 | | ***3.53*** |
| ***Սեպտեմբեր*** | 7,917.33 | 13.25 | 811.75 | 11.83 | 56.24 | 12.00 | 278.00 | 10.18 | ***9,063.32*** | ***13.02*** |
| MAX | | 18.00 | | 13.00 | | 12.00 | | 10.50 | | ***18.00*** |
| MIN | | 9.00 | | 11.00 | | 12.00 | | 10.00 | | ***9.00*** |
| STDEV | | 1.45 | | 0.68 | | | | 0.35 | | ***1.48*** |

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

*(մլն ՀՀ դրամ)*

| ժամկետ | Ավանդի ծավալ* | Տոկոսադրույք | Վարկի ծավալ* | Տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **2001** | | | | |
| Հունվար | - | - | 3269 | 45 |
| Փետրվար | - | - | 390.6 | 45 |
| Մարտ | - | - | 1616 | 45 |
| Մայիս | 320 | 8 | - | - |
| Օգոստոս | - | - | 300 | 35 |
| Դեկտեմբեր | 50 | 8 | 792 | 30 |
| **2002** | | | | |
| Հունվար | 1780 | 8 | - | - |
| Փետրվար | 4524 | 6.71 | - | - |
| Մարտ | 2170 | 6 | 250 | 28 |
| Ապրիլ | 45 | 6 | 269 | 28 |
| Հունիս | - | - | 4161 | 28 |
| Հուլիս | - | - | 508 | 28 |
| Օգոստոս | - | - | 518 | 28 |
| Սեպտեմբեր | 245 | 6 | - | - |

** Մարումները հանված չեն:*

## ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

*(մլն ՀՀ դրամ)*

| ժամկետ | Ռեպո համաձայն. ծավալը * | Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը | Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը* | Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը |
|---|---|---|---|---|
| **2001** | | | | |
| Մարտ | 429 | 23.0 | - | - |
| Ապրիլ | 1262 | 22.1 | - | - |
| Հունիս | 1169 | 18.0 | - | - |
| Հուլիս | 1775 | 16.0 | - | - |
| Օգոստոս | 416 | 16.0 | - | - |
| Սեպտեմբեր | 1414 | 15.0 | - | - |
| Հոկտեմբեր | 1608 | 15.0 | - | - |
| **2002** | | | | |
| Հունվար | - | - | - | - |
| Օգոստոս | 2863 | 13.5 | - | - |
| Սեպտեմբեր | - | - | - | - |

** Մարումները հանված չեն:*

## ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

| Ամսաթիվ | Դ-01 | Հ-02 | Փ-02 | Մ-02 | Ա-02 | Մ-02 | Հ-02 | Հ-02 | Օ-02 | Ս-02 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | - | - | 563.99 | 568.18 | 576.96 | - | - | 575.35 | 561.16 | - |
| 2 | - | - | - | - | 577.26 | 579.34 | - | 573.79 | 560.55 | 556.49 |
| 3 | 566.51 | 561.81 | - | - | 577.56 | 579.34 | 582.22 | 572.14 | - | 555.92 |
| 4 | 566.51 | 561.81 | 563.84 | 568.18 | 577.56 | - | 582.22 | 569.39 | - | 556.23 |
| 5 | 566.51 | - | 563.18 | 567.71 | 577.88 | - | 582.38 | - | 560.37 | 555.98 |
| 6 | 566.51 | - | 563.28 | 568.68 | - | 579.75 | 582.38 | - | 560.02 | 555.24 |
| 7 | 566.51 | 562.15 | 564.21 | 568.68 | - | 580.07 | 581.92 | - | 559.49 | - |
| 8 | - | 562.55 | 564.09 | - | 577.88 | 580.84 | - | 567.88 | 559.00 | - |
| 9 | - | 563.01 | - | - | 578.28 | - | - | 568.10 | 558.46 | 555.08 |
| 10 | 566.20 | 563.70 | - | - | 578.28 | 580.84 | 581.92 | 568.52 | - | 555.62 |
| 11 | 565.85 | 564.15 | 564.25 | 569.45 | 578.18 | - | 582.03 | 568.52 | - | 556.39 |
| 12 | 564.94 | - | 564.05 | 570.10 | 577.22 | - | 582.32 | 568.52 | 558.46 | 557.78 |
| 13 | 564.76 | - | 564.42 | 570.55 | - | 580.27 | 582.58 | - | 558.46 | 557.78 |
| 14 | 564.45 | 564.60 | 565.00 | 571.12 | - | 580.58 | 582.83 | - | 558.13 | - |
| 15 | - | 565.06 | 565.53 | 571.57 | 577.22 | 580.93 | - | 565.74 | 558.13 | - |
| 16 | - | 565.48 | - | - | 577.22 | 580.93 | - | 565.74 | 558.20 | 557.78 |
| 17 | 564.86 | 565.48 | - | - | 577.76 | 580.53 | 582.54 | 565.50 | - | 557.90 |
| 18 | 564.86 | 565.98 | 565.53 | 571.57 | 578.46 | - | 582.84 | 565.20 | - | 557.90 |
| 19 | 564.86 | - | 565.27 | 571.98 | 578.86 | - | 580.88 | 562.36 | 558.47 | 558.00 |
| 20 | 564.86 | - | 565.84 | 572.66 | 578.86 | 580.53 | 580.88 | - | 558.04 | 562.20 |
| 21 | 564.86 | 565.16 | 565.84 | 572.84 | - | 580.87 | 578.83 | - | 557.33 | - |
| 22 | - | 564.86 | 566.86 | 573.58 | 578.86 | 580.87 | - | 562.64 | 557.75 | - |
| 23 | - | 564.44 | 566.86 | - | 578.97 | 581.14 | - | 560.57 | 557.98 | 571.00 |
| 24 | 564.51 | 564.27 | - | - | - | 581.14 | 578.83 | 560.97 | - | 575.51 |
| 25 | 563.62 | 564.18 | 566.86 | 573.98 | 579.09 | - | 578.65 | 560.97 | - | 579.03 |
| 26 | 563.37 | - | 566.86 | 574.82 | 579.79 | - | 578.53 | 561.95 | 557.66 | 580.18 |
| 27 | 562.49 | - | 566.96 | 575.12 | 579.79 | 581.48 | 578.53 | 561.95 | 557.66 | 580.18 |
| 28 | 562.20 | 563.85 | 568.18 | 575.55 | - | 581.48 | 577.14 | - | 557.92 | 580.18 |
| 29 | 561.81 | 564.46 | - | 575.96 | 579.79 | 581.82 | 577.14 | 561.95 | 557.38 | 580.18 |
| 30 | 561.81 | 564.34 | - | 576.96 | 579.34 | 582.04 | 577.14 | 561.67 | 557.00 | 580.18 |
| 31 | 561.81 | 564.39 | - | 576.96 | - | 582.22 | - | 561.53 | 557.00 | - |
| Ժամանակահատվածի վերջ | 561.81 | 564.39 | 568.18 | 576.96 | 579.34 | 582.22 | 577.14 | 561.53 | 557.00 | 580.18 |
| Ժամանակահատվածի միջին | 564.55 | 564.08 | 565.28 | 572.10 | 578.31 | 580.81 | 580.67 | 565.69 | 558.46 | 564.47 |

# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*(2002 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ)*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծանո-թագր.* | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|---|
| ***Ակտիվներ*** | | | | |
| **Ակտիվներ ոսկով և արտարժույթով** | | | | |
| Ոսկի | 1 | 8 343 893 | 8 285 546 | 6 992 990 |
| ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ | 2 | 72 936 756 | 68 672 204 | 70 671 722 |
| Արտարժութային ակտիվներ | 3 | 194 631 373 | 186 437 366 | 175 329 009 |
| **Ակտիվներ ՀՀ դրամով** | | | | |
| Պետական արժեթղթեր | 4 | 4 030 766 | 5 942 031 | 10 407 458 |
| Վարկեր և ավանդներ բանկերում | 5 | 7 189 226 | 5 037 858 | 3 718 549 |
| Այլ ակտիվներ | 6 | 1 053 671 | 1 115 989 | 1 025 165 |
| Հիմնական միջոցներ | 7 | 4 037 443 | 4 079 662 | 4 169 628 |
| ***Ընդամենը ակտիվներ*** | | **292 223 128** | **279 570 656** | **272 314 521** |
| ***Պարտավորություններ*** | | | | |
| **Պարտավորություններ արտարժույթով** | | | | |
| Բանկեր | | 6 962 164 | 4 116 654 | 3 873 667 |
| ԱՄՀ | 2 | 82 858 385 | 84 003 166 | 83 070 536 |
| Հայաստանի կառավարություն | | 337 294 | 2 043 677 | 2 165 609 |
| Այլ | 8 | 32 281 | 212 288 | 256 373 |
| **Պարտավորություններ ՀՀ դրամով** | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ | | 68 689 690 | 61 787 408 | 66 692 499 |
| Հայաստանի կառավարության ավանդներ և հաշիվներ | 9 | 15 070 963 | 10 148 119 | 6 531 082 |
| Բանկերի ավանդներ և հաշիվներ | | 11 591 597 | 12 367 656 | 13 539 540 |
| Այլ ավանդներ և հաշիվներ | | 250 146 | 252 907 | 222 257 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 2 | 78 932 340 | 79 965 140 | 78 790 225 |
| Այլ պարտավորություններ | 10 | 217 110 | 226 110 | 323 797 |
| ***Ընդամենը պարտավորություններ*** | | **264 941 969** | **255 123 125** | **255 465 585** |
| ***Կապիտալ և պահուստներ*** | | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 100 000 | 100 000 | 100 000 |
| Գլխավոր պահուստ | | 9 064 908 | 9 064 908 | 9 064 908 |
| Ոսկու և արտարժույթի վերագնահատման պահուստներ | | 15 171 351 | 14 250 217 | 7 684 028 |
| Շահույթ | | 2 944 899 | 1 032 406 | 0 |
| ***Ընդամենը պարտավորություններ և կապիտալ*** | | **292 223 128** | **279 570 656** | **272 314 521** |

*Հաշվեկշռին կից ծանոթագրությունները կազմում են հաշվեկշռի անբաժանելի մասը:*

*Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2002 թվականի նոյեմբերի 18-ին և ստորագրվել.*

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**
*Նախագահ*

**ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
*Գլխավոր հաշվապահ*

### *Ծանոթագրություն 1. Ոսկի*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Ոսկով ավանդներ և հաշիվներ | 8 339 926 | 8 278 087 | 6 974 776 |
| Հաշվեգրված տոկոսներ (ոսկով ավանդների դիմաց տոկոսագումարները հաշվեգրվում և ստացվում են ԱՄՆ դոլարով) | 3 967 | 7 459 | 18 214 |
| | **8 343 893** | **8 285 546** | **6 992 990** |

### *Ծանոթագրություն 2. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվներ*

***ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ***

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Ակտիվներ ՀՓԻ-ով | 5 347 541 | 1 096 495 | 5 747 166 |
| ԱՄՀ-ի անդամակցություն | 67 567 560 | 67 567 560 | 64 898 640 |
| Հաշվեգրված տոկոսներ | 21 655 | 8 149 | 25 916 |
| | **72 936 756** | **68 672 204** | **70 671 722** |

***ՀՀ դրամով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ***

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Արժեթղթերի հաշիվ | 78 732 067 | 75 300 719 | 77 325 519 |
| ԱՄՀ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների ճշտման հաշիվ | - | 4 464 337 | 1 264 622 |
| Թիվ 1 հաշիվ | 196 796 | 196 796 | 196 796 |
| Թիվ 2 հաշիվ | 3 477 | 3 288 | 3 288 |
| | **78 932 340** | **79 965 140** | **78 790 225** |

***ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ***

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Վարկեր | 82 696 818 | 83 936 169 | 83 001 481 |
| Հաշվեգրված տոկոսներ | 161 567 | 66 997 | 69 055 |
| | **82 858 385** | **84 003 166** | **83 070 536** |

### *Ծանոթագրություն 3. Այլ արտարժութային ակտիվներ*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Արտարժույթով ավանդներ և թղթակցային հաշիվներ | 97 734 477 | 91 934 442 | 89 127 771 |
| Հավատարմագրային կառավարման հաշիվներ | 60 592 361 | 59 168 967 | 57 604 479 |
| Արժեթղթեր | 30 381 432 | 31 947 148 | 27 659 326 |
| Արտարժույթով վարկեր | 2 372 936 | 2 360 503 | 0 |
| Ակրեդիտիվներ | 502 848 | 0 | 0 |
| Հաշվեգրված տոկոսներ | 736 407 | 737 451 | 833 235 |
| Դեբիտորական պարտքեր արտարժույթով | 1 619 980 | 182 224 | 513 |
| Կանխիկ արտարժույթ | 690 010 | 105 710 | 102 880 |
| Այլ արտարժութային ներդրումներ | 922 | 921 | 805 |
| | **194 631 373** | **186 437 366** | **175 329 009** |

### *Ծանոթագրություն 4. Պետական արժեթղթեր*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Հայաստանի կառավարության արժեթղթեր | 3 929 296 | 5 824 678 | 10 189 526 |
| Հաշվեգրված տոկոսներ | 101 470 | 117 353 | 217 932 |
| | **4 030 766** | **5 942 031** | **10 407 458** |

### *Ծանոթագրություն 5. Վարկեր և ավանդներ բանկերում*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Վարկեր ռեզիդենտ բանկերին | 7 325 000 | 5 000 000 | 3 905 104 |
| Ավանդներ բանկերում | - | 198 436 | 0 |
| Հաշվեգրված տոկոսներ | 119 383 | 94 579 | 68 602 |
| Վարկերի արժեզրկման կորուստներ (ծանոթ. 14) | (255 157) | (255 157) | (255 157) |
| | **7 189 226** | **5 037 858** | **3 718 549** |

### *Ծանոթագրություն 6. Այլ ակտիվներ ՀՀ դրամով*

*(հազար ՀՀ դրամ)*

| | *30.09.02* | *30.06. 02* | *31.12.01* |
|---|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր | 64 213 | 97 166 | 23 080 |
| Դրամագիտական արժեքներ | 168 148 | 192 904 | 219 911 |
| Ներդրումներ | 660 247 | 660 247 | 660 247 |
| Այլ ակտիվներ | 161 063 | 165 672 | 121 927 |
| | **1 053 671** | **1 115 989** | **1 025 165** |

### *Ծանոթագրություն 7. Հիմնական միջոցներ*

*(հազար ՀՀ դրամ)*

| | **Հող, շենք և շինություններ** | **Համակարգչ. սարքավոր.** | **Համակարգչ. ծրագրեր** | **Այլ հիմնական միջոցներ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| *Արժեք կամ գնահատում* | | | | | |
| | | **3 ամիս** | | | |
| Առ 1 հուլիսի 2002 թ. | 3 143 895 | 1 526 046 | 215 030 | 1 916 651 | 6 801 622 |
| Ավելացում | 113 209 | 0 | 0 | 18 938 | 132 147 |
| Օտարում | - | 0 | 0 | (80) | (80) |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 3 257 104 | 1 526 046 | 215 030 | 1 935 509 | 6 933 689 |
| | | | | | |
| *Մաշվածք* | | | | | |
| Առ 1 հուլիսի 2002 թ. | 436 983 | 1 249 399 | 182 972 | 852 606 | 2 721 960 |
| Կուտակված մաշվածք | 38 738 | 40 497 | 4 008 | 91 043 | 174 286 |
| Օտարում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 475 721 | 1 289 896 | 186 980 | 943 649 | 2 896 246 |
| | | | | | |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | |
| Առ 30 հունիսի 2002 թ. | 2 706 912 | 276 647 | 32 058 | 1 064 045 | 4 079 662 |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 2 781 383 | 236 150 | 28 050 | 991 860 | 4 037 443 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **9 ամիս** | | |
| Առ 1 հունվարի 2002 թ. | 3 087 602 | 1 595 841 | 217 446 | 1 690 820 | 6 591 709 |
| Ավելացում | 185 776 | 4 080 | 4 481 | 207 756 | 402 093 |
| Հաշվի կարգավորում | 0 | (67 043) | 0 | 67 043 | 0 |
| Օտարում | (16 274) | (6 832) | (6 897) | (30 110) | (60 113) |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 3 257 104 | 1 526 046 | 215 030 | 1 935 509 | 6 933 689 |
| | | | | | |
| *Մաշվածք* | | | | | |
| Առ 1 հունվարի 2002 թ. | 372 984 | 1 158 892 | 182 202 | 708 003 | 2 422 081 |
| Կուտակված մաշվածք | 102 737 | 137 707 | 11 675 | 264 562 | 516 681 |
| Օտարում | 0 | (6 703) | (6 897) | (28 916) | (42 516) |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 475 721 | 1 289 896 | 186 980 | 943 649 | 2 896 246 |
| | | | | | |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2001 թ. | 2 714 618 | 436 949 | 35 244 | 982 817 | 4 169 628 |
| Առ 30 սեպտեմբերի 2002 թ. | 2 781 383 | 236 150 | 28 050 | 991 860 | 4 037 443 |

## *Ծանոթագրություն 8. Այլ պարտավորություններ արտարժույթով*

*(հազար ՀՀ դրամ)*

| | ***30.09.02*** | ***30.06. 02*** | ***31.12.01*** |
|---|---|---|---|
| Հավատարմագրային կառավարման համար միջոցներ | 0 | 201 999 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր արտարժույթով | 3 868 | 2 858 | 255 234 |
| Հաշվեգրված տոկոսներ | 11 685 | 5 884 | 74 |
| Այլ պարտավորություններ արտարժույթով ՀՀ ռեզիդենտների հանդեպ | 16 728 | 1 547 | 1 065 |
| | **32 281** | **212 288** | **256 373** |

## *Ծանոթագրություն 9. ՀՀ կառավարության հաշիվներ և ավանդներ*

*(հազար ՀՀ դրամ)*

| | ***30.09.02*** | ***30.06. 02*** | ***31.12.01*** |
|---|---|---|---|
| Հայաստանի կառավարության հաշիվներ և ավանդներ | 15 070 963 | 10 148 119 | 1 744 848 |
| ՀՀ կառավարությանը մասհանում շահույթից | - | - | 4 786 234 |
| | **15 070 963** | **10 148 119** | **6 531 082** |

## *Ծանոթագրություն 10. Այլ պարտավորություններ ՀՀ դրամով*

*(հազար ՀՀ դրամ)*

| | ***30.09.02*** | ***30.06. 02*** | ***31.12.01*** |
|---|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր | 25 519 | 17 286 | 90 253 |
| Հաշվեգրված տոկոսներ | 42 939 | 35 954 | 10 709 |
| Այլ | 148 652 | 172 870 | 222 835 |
| | 217 110 | 226 110 | 323 797 |

# Սղաճի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկի (FAN CHART) կառուցումը և մեկնաբանությունը

*Աշոտ Սարգսյան*
*(Դրամավարկային քաղաքականության վարչություն)*

## Ներածություն

Կենտրոնական բանկերում կատարվող կանխատեսումները մեծամասամբ օգտագործվում են իրականացվելիք դրամավարկային քաղաքականության ընթացքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Այնուամենայնիվ, ոչ բոլոր կենտրոնական բանկերն են հրապարակում այդ կանխատեսումների արդյունքները: Կանխատեսման արդյունքների հրապարակման նպատակն է դրամավարկային քաղաքականությունը դարձնել ավելի արդյունավետ և թափանցիկ, նվազագույնի հասցնել կենտրոնական բանկի գործողությունների և մտադրությունների վերաբերյալ հասարակության շրջանում առկա անորոշության չափը: Սակայն հաճախ, հրապարակելով փոփոխականների կանխատեսված ծրագրային արժեքները, ԿԲ-ն ի վիճակի չի լինում դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ապահովել դրանք: Վերջինիս հետևանքով կարող է վտանգվել ԿԲ վարկանիշը (credibility): Այս պատճառով հաճախ անհրաժեշտություն է առաջանում ընտրություն կատարել իրականացվող քաղաքականության թափանցիկության և ԿԲ վարկանիշի միջև:

Կանխատեսումները հրապարակելով հավանականությունների բաշխման գրաֆիկի տեսքով՝ կենտրոնական բանկերը կարող են խուսափել թափանցիկության և վարկանիշի միջև ընտրություն կատարելու դժվարին խնդրից: Այս դեպքում հրապարակվում են ոչ միայն կանխատեսումների արդյունքում ստացված կետային արժեքները, այլ նաև ապագայում այդ արժեքներից հնարավոր շեղման միջակայքերը: Այդ միջակայքերը ներկայացվում են, այսպես կոչված՝ հավանականությունների բաշխման գրաֆիկի տեսքով (Fan chart) և արտահայտում են կանխատեսված արժեքից ապագայում հնարավոր շեղման ռիսկերի վերաբերյալ ԿԲ տեսակետը: Այլ կերպ ասած՝ հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս երևույթների զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ ԿԲ գնահատականը:

## FAN CHART-ի տեսական նկարագրությունը

Հավանականությունների բաշխման գրաֆիկի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ այդ արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա՝ մենք չենք կարող բավարար չափով տեղեկատվություն ստանալ դրանց հետ կապված անորոշությունների կառուցվածքի և աղբյուրների մասին: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Սովորաբար այդ միջակայքերի կառուցման համար կիրառվում են նախորդ կանխատեսումների սխալները՝ ենթադրությամբ, որ դրանք ունեն նորմալ բաշխում: Այսինքն՝ այս դեպքում ենթադրում ենք, որ սղաճի հնարավոր ապագա արժեքները սիմետրիկ են ցրված կենտրոնի շուրջ: Դա նշանակում է, որ ապագայում կանխատեսված արժեքից վերև կամ ներքև շեղումները հավասարահնարավոր են (ռիսկերը հաշվեկշռված են) և ինչքան մոտ են կենտրոնին, այնքան ավելի մեծ է դրանց տեղի ունենալու հավանականությունը:

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշման հետ:*

Սակայն կոնկրետ իրավիճակներում հնարավոր է ասիմետրիկության մասին ենթադրությունը (ռիսկերը անհաշվեկշռված են): Այսինքն՝ այս դեպքում կանխատեսված արժեքներից որևէ կոնկրետ ուղղությամբ (վերև / ներքև) շեղումները ավելի հավանական են, քան հակառակ ուղղությամբ (ներքև / վերև): Մեթոդը, որ առաջին անգամ կիրառվել է Անգլիայի բանկի կողմից, հաշվի է առնում ասիմետրիկության առկայությունը: Այդ պատճառով այստեղ կիրառվում է ոչ թե նորմալ բաշխման, այլ այսպես կոչված՝ երկու-կտոր նորմալ բաշխման գաղափարը (“two-piece” normal distribution): Բաշխումը դուրս բերելու համար անհրաժեշտ է գնահատել երեք պարամետր՝


1. սղաճի կենտրոնական արժեքը՝ որպես կոնկրետ նպատակային սցենար,
2. անորոշության չափը (դիսպերսիան),
3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության (asymmetry) գործակցի գնահատման նպատակով:

Այժմ քննարկենք վերոնշյալ երեք պարամետրերը առանձին-առանձին:

1. Որպես սղաճի կենտրոնական նպատակային արժեք՝ վերցվում է ԿԲ կողմից կանխատեսումների միջոցով ստացված արժեքը: Այնուհետև այդ արժեքը մեկնաբանվում է որպես վիճակագրական բաշխման մոդ (mode), քանի որ դա գիտելիքների և դատողությունների վրա հիմնված միակ ամենահավանական արդյունքն է: Եթե ռիսկերը սիմետրիկ են բաշխված այս կենտրոնի (կանխատեսված արժեքի) շուրջ, ապա այն կարելի է մեկնաբանել նաև որպես բաշխման միջին (mean): Այսինքն՝ այս դեպքում մոդը և միջինը իրար հավասար են: Սակայն, երբ ռիսկերը անհաշվեկշռված են, միջինը և մոդը միանգամայն տարբեր մեծություններ են:

Այստեղ տեղին է նշել նաև միջնարժեքի (median) հասկացությունը, որը բաշխումը կիսում է երկու հավասար մասի: Բաշխման գրաֆիկի (Fan chart) մեկնաբանման համար շատ կարևոր է մոդի, միջինի և միջնարժեքի միջև փոխադարձ կապի ճիշտ պատկերացումը:

*Գրաֆիկ 1*





Գրաֆիկ 1-ում պատկերված են վերոնշյալ երեք բնութագրիչները այն դեպքի համար, երբ բաշխումը անհամաչափ է (asymmetryc distribution ): Ըստ գրաֆիկի՝ երբ աճի ուղղությամբ ռիսկերը գերակշռում են, ապա միջին սղաճը կլինի ավելի մեծ, քան միջնարժեքը, որն էլ իր հերթին մեծ է մոդից:

2. Անորոշության չափը երկրորդ կարևոր պարամետրն է, որը թույլ է տալիս դատողություններ անել կանխատեսված արժեքից ապագայում հնարավոր շեղումների մեծության վերաբերյալ: Անորոշության չափի սկզբնական (առաջնային) մեծության գնահատման համար հիմք են հանդիսանում նախորդ տարիների կանխատեսման սխալները: Որպես անորոշության աստիճանը արտահայտող ցուցանիշ՝ ընդունված է կիրառել վարիացիայի ցուցանիշը: Օրինակ՝ Անգլիայի բանկում անորոշության սկզբնական գնահատումը կատարվում է նախորդ տասը տարիների կանխատեսման սխալների հիման վրա: Այնուհետև անորոշության ստացված գնահատականը որոշակիորեն ճշգրտվում է (ավելացվում կամ պակասեցվում)՝ Դրամավարկային քաղաքականության կոմիտեի (ԴՔԿ) կողմից կատարված սուբյեկտիվ առաջարկությունները հաշվի առնելով: Ընդ որում, հնարավոր ռիսկերի գնահատման նպատակով ԴՔԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին մասնակցում են նաև բանկի համապատասխան մասնագետները: Փաստորեն, կանխատեսված արժեքից շեղման հնարավոր ռիսկերը գնահատելիս հաշվի են առնվում ոչ միայն նախորդ փաստացի ցուցանիշները, այլ նաև ապագա սպասումները (forward-looking view of the risks): Այդ սուբյեկտիվ ճշգրտումները պայմանավորված են այն հանգամանքով, որ ապագա անորոշության

մակարդակը կարող է ավելի մեծ կամ ավելի փոքր լինել անցյալի համեմատությամբ: Օրինակ, ստորև բերված գրաֆիկից կարելի է նկատել, որ սկսած 1999 թվականից՝ սղաճը ՀՀ-ում ունեցել է ավելի կայուն վարքագիծ, քան նախորդ տարիներին, որը նպաստել է կանխատեսման ճշգրտության մեծացմանը:

*Գրաֆիկ 2*





3. Ունենալով սղաճի կանխատեսված արժեքները (որպես կենտրոնական նպատակային սցենար), ինչպես նաև այդ արժեքներից շեղման հնարավոր ռիսկերի գնահատականը՝ կարող է պարզ դառնալ, որ ռիսկերը անհաշվեկշռված են: Ռիսկերի անհաշվեկշռվածությունը նշանակում է, որ ապագայում, կանխատեսված արժեքից որևէ կոնկրետ ուղղությամբ շեղումներն ավելի հավանական են, քան հակառակ ուղղությամբ: Ըստ հավանականությունների բաշխման գրաֆիկի (fan chart) կառուցման մեթոդաբանության, որպես ռիսկերի անհաշվեկշռվածությունը արտահայտող ցուցանիշ՝ հանդես է գալիս միջինի և մոդի միջև տարբերությունը՝ $\gamma$ = mean - mode: Այդ տարբերության՝ ոչ զրոյական մեծություն լինելու փաստը վկայում է կանխատեսված արժեքների բաշխման ասիմետրիկության մասին (measure of skewness): Երբ $\gamma$ պարամետրը բացասական է ($\gamma < 0$), ապա բաշխումը թեքված է դեպի ձախ կամ, այլ կերպ ասած, կանխատեսված արժեքից դեպի ներքև շեղումներն ապագայում գերակշռում են: Երբ $\gamma$-ն դրական է ($\gamma > 0$), նշանակում է՝ աճի ուղղությամբ ռիսկերն են գերակշռող: Եվ վերջապես, երբ բաշխումը սիմետրիկ է, ապա թեքվածություն գոյություն չունի ($\gamma = 0$), որն էլ նշանակում է, որ կանխատեսված արժեքից վերև կամ ներքև շեղումները հավասարահնարավոր են:


## FAN CHART-ի կառուցումը

Ունենալով սղաճի կանխատեսված արժեքները՝ որպես կենտրոնական նպատակային սցենար (մոդ), անորոշության չափը (դիպերսիա) և ռիսկերի հաշվեկշիռը (միջին - մոդ)՝ կարող ենք կառուցել սղաճի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկը: Fan chart-ը ավելի լավ հասկանալու համար քննարկենք ստորև ներկայացված գրաֆիկները:

*Գրաֆիկ 3*



*Գրաֆիկ 4*




Գրաֆիկ 3-ում պատկերված է հավանականությունների խտության ֆունկցիան (pdf) որոշակի եռամսյակի համար: Խտության ֆունկցիայի բարձրությունը համապատասխանում է այդ ժամանակահատվածում սղաճի որևէ կոնկրետ արժեքի հանդես գալու հավանականությանը: Հետևապես, կարող ենք ասել, որ կենտրոնական նպատակային սցենարը (կանխատեսված արժեք) համապատասխանում է բաշխման գագաթին, քանի որ կապված է մոդի հետ:


Գրաֆիկ 4-ում պատկերված է հավանականությունների բաշխման գրաֆիկը (Fan chart), որտեղ արդեն ի մի են բերված կանխատեսվող ամբողջ ժամանակահատվածի համար հավանականությունների առանձին բաշխումները: Այն բաղկացած է միջակայքերից, որոնցից յուրաքանչյուրը ներկված է կարմիր գույնով, և ինչքան տվյալ միջակայքը հեռու է կենտրոնից, այնքան կարմիրն ավելի թույլ է արտահայտված (river of blood): Յուրաքանչյուր միջակայքի գունային գամման արտացոլում է ինֆլյացիայի՝ տվյալ միջակայքում ընկնելու հարաբերական հավանականությունը (ինչքան գույնը մուգ է, այնքան հավանականությունը մեծ է): Միջակայքերը կառուցվում են հետևյալ կերպ (տես գրաֆիկ 3). մոդի (mode) երկու կողմերում վերցվում է հավասար հավանականություններով երկու կետ: Այնուհետև, հավանականությունները հավասար պահելով, այդ երկու կետերը միաժամանակ հեռացվում են կենտրոնից այնքան, մինչև դրանցով սահմանափակված միջակայքը կընդգրկի բաշխման 10%-ը: Այդ միջակայքը ներկվում է մուգ կարմիր: Հավանականությունները թողնելով նույնը՝ նորից հեռացնում ենք այդ երկու կետերը, մինչև դրանք կընդգրկեն բաշխման 20%-ը: Ստացված երկու նոր միջակայքերը, որոնք գտնվում են մոդի աջ և ձախ կողմերում, ներկվում են միևնույն գույնով, որը սակայն ավելի բաց է, քան առաջինը: Գործընթացը շարունակվում է այնքան, մինչև որ կներառվի բաշխման 90%-ը:

Հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս հնարավոր ելքերի հարաբերական հավանականությունը: Կենտրոնի մուգ կարմիր միջակայքը, որը ներառում է նաև կենտրոնական նպատակային սցենարը (կանխատեսված արժեքները) ցույց է տալիս, որ 10%-ով հնարավոր է, որ ժամանակի ցանկացած պահին սղաճը կգտնվի այդ միջակայքում:

Հավանականությունների բաշխման գրաֆիկին մշտապես բնորոշ են հետևյալ հատկությունները.

- կենտրոնական միջակայքի յուրաքանչյուր կողմում գոյություն ունեն հավասար թվով միջակայքեր (8 հատ),
- միջակայքերի յուրաքանչյուր զույգ ընդգրկում է բաշխման 10%-ը, սակայն եթե ռիսկերը անհաշվեկշռված են, ապա միևնույն գույնի միջակայքերը տարբեր լայնություն ունեն,
- կենտրոնական նպատակային արժեքները միշտ գտնվում են ամենամուգ կարմիր միջակայքում, քանի որ այն կապվում է մոդի հասկացության հետ:
- յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կենտրոնական միջակայքից ավելի հեռու գտնվող միջակայքերի գունային երանգն ավելի բացանում է (թուլանում է)՝ արտահայտելով հարաբերականորեն առավել փոքր հավանականություն,
- յուրաքանչյուր հաջորդ ժամանակահատվածի համար հավանականությունների բաշխման գրաֆիկն ավելի լայն տեսք ունի, որը վկայում է, որ կանխատեսման հորիզոնի ընդլայնման հետ աճում է նաև անորոշությունը (օրինակ՝ մեկ եռամսյակ հետո հնարավոր ելքի որոշակիությունն ավելի մեծ է, քան մեկ տարի հետո): Այդ է վկայում նաև ստորև բերված փաստացի թվային շարքերի հիման վրա կառուցված գրաֆիկը:

*Գրաֆիկ 5*




Գրաֆիկ 4-ում պատկերված է ՀՀ համար կանխատեսված սղաճի հավանականությունների բաշխումը: Վերջինիս կառուցման համար օգտագործվել են 2002 թ. համար P-STAR սղաճի մոդելի միջոցով կանխատեսված բնականոն սղաճի ցուցանիշները:

Գրաֆիկից կարելի է նկատել, որ այն թեքված է դեպի վեր: Դա ցույց է տալիս, որ կանխատեսված արժեքից աճի ուղղությամբ ռիսկերը ապագայում գերակշռող են: Այդ է վկայում նաև այն, որ կենտրոնական նպատակային սցենարից (ամենամուգ միջակայք) դեպի վեր գտնվող յուրաքանչյուր միջակայք ավելի լայն է, քան ներքևում գտնվող նույն գունային երանգն ունեցող համապատասխան միջակայքը: Ասվածն ավելի պարզ դարձնելու համար հավանականությունների խտության ֆունկցիայի միջոցով հաշվարկվել են նաև միջին տարեկան սղաճի՝ տարբեր միջակայքերում ընկնելու հավանականությունները: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացված են ստացված արդյունքները.

**I տարբերակ** *(տարեկան միջին սղաճ)*

| Միջակայք | ավելի քիչ, քան 1% | 1% - 2% | 2% - 3% | 3% - 4% | 4% - 5% | 5% - 6% | ավելի, քան 6% |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հավանականություն (%) | 3 | 17 | 29 | 24 | 16 | 8 | 3 |

**II տարբերակ** *(տարեկան միջին սղաճ)*

| Միջակայք | ավելի քիչ, քան 0.5% | 0.5% - 2% | 2% - 3.5% | 3.5% - 5% | 5% - 6.5% | ավելի, քան 6.5% |
|---|---|---|---|---|---|---|
| Հավանականություն (%) | 1 | 19 | 43 | 26 | 9 | 2 |

Նախ նշենք, որ մոդը (ամենահավանական արժեք) 2002 թ. միջին սղաճի ծրագրային ցուցանիշն է (2.3%): Հետևաբար, վերը ներկայացված երկու տարբերակներում մոդը պարունակող միջակայքում ընկնելու հավանականությունը ամենամեծն է: Բերված աղյուսակներից կարելի է եզրակացություն անել նաև

սղաճի հնարավոր արժեքների բաշխվածության անհամաչափության մասին: Ինչպես տեսնում ենք, մոդը պարունակող միջակայքից դեպի ձախ (նվազման ուղղությամբ) հնարավոր են սղաճի համեմատաբար ավելի քիչ թվով արժեքներ, քան դեպի աջ (աճի ուղղությամբ): Նկատենք նաև, որ և՛ առաջին, և՛ երկրորդ տարբերակներում ձախակողմյան հնարավոր արժեքների հանդես գալու գումարային հավանականությունը (20%) ավելի փոքր է, քան աջակողմյան արժեքներինը (համապատասխանաբար 51% և 37%): Սա վկայում է, որ 2002 թվականին ՀՀ-ում սղաճի ծրագրային ցուցանիշից աճի ուղղությամբ ռիսկերը գերակշռող են, որին մենք եզրահանգել էինք վերը պատկերված հավանականությունների բաշխման գրաֆիկի միջոցով (գրաֆիկ 4):

Եվ վերջապես, նկատենք, որ առաջին տարբերակում մոդը պարունակող միջակայքում (2% - 3%) և դրանից անմիջապես աջ գտնվող միջակայքում (3% - 4%) սղաճի ընկնելու հավանականությունները իրար բավականին մոտ են: Ուստի երկրորդ տարբերակում տրվել է սղաճի հնարավոր արժեքների մեկ այլ տարանջատում, որի միջոցով առանձնացվել է զգալիորեն ավելի մեծ հավանականություն ունեցող միջակայք (2% - 3,5%):

## Եզրակացություն

- Հավանականությունների բաշխման գրաֆիկը պատկերավոր և արդյունավետ մի մեթոդ է՝ ներկայացնելու համար ԿԲ տեսակետը իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի և սղաճի վրա դրանց հնարավոր հետևանքների վերաբերյալ,
- Կանխատեսումների հրապարակումը հավանականությունների բաշխման գրաֆիկի տեսքով ԿԲ-ին հնարավորություն է տալիս շրջանցել թափանցիկության և վարկանիշի միջև ընտրության կատարման դժվարին խնդիրը և այն լուծել դրանց միաժամանակյա ապահովման միջոցով:
- ՀՀ-ի համար կառուցված հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս, որ սղաճի կանխատեսված արժեքից աճի ուղղությամբ ռիսկերը ապագայում գերակշռող են, որի հիման վրա ՀՀ ԿԲ խորհրդին կարելի է ուղղորդել ճշգրտման ուղղությամբ համապատասխան որոշումների հարցերում:
- Կառուցված գրաֆիկը և համապատասխան մեկնաբանությունները կարող են ներկայացվել դրամավարկային քաղաքականության ծրագրում և սղաճի կիսամյակային հաշվետվություններում:

Նորմալ բաշխման ֆունկցիոնալ տեսքը հետևյալն է.

$$pdf = \frac{1}{\sqrt{2\Pi\sigma^2}}\exp\left[\frac{-(x-\mu)^2}{2\sigma^2}\right] \quad (1)$$

որտեղ՝ $\mu$ - բաշխման միջինն է,

$\sigma^2$ - դիսպերսիան է,

x – նորմալ բաշխված պատահական փոփոխականը

Երկու կտոր նորմալ բաշխման խտության ֆունկցիան ներկայացվում է հետևյալ կերպ՝[1]

$$f(x;\mu,\sigma_1,\sigma_2) = \begin{cases} A\exp\left\{\frac{-(x-\mu)^2}{2\sigma_1^2}\right\} & ,\text{երբ } x \le \mu \\ A\exp\left\{\frac{-(x-\mu)^2}{2\sigma_2^2}\right\} & ,\text{երբ } x > \mu\ , \end{cases} \quad (2)$$

որտեղ՝ $A = \left(\sqrt{2\Pi}\left(\frac{\sigma_1+\sigma_2}{2}\right)\right)^{-1}$ - ն նորմավորում է խտության ֆունկցիան այնպես, որ դրա ինտեգրալը հավասար լինի մեկի:

Երկու կտոր նորմալ բաշխումը որոշվում է երեք պարամետրերի միջոցով: Դրանք են՝ մոդը՝ $\mu$, և ստանդարտ շեղման երկու մեծությունները՝ $\sigma_1$ և $\sigma_2$: Հայտնի է նաև, որ վերոնշյալ բաշխման համար դիսպերսիան և մաթեմատիկական սպասումը որոշվում են հետևյալ արտահայտությունների միջոցով.

$$E(x) = \mu + \sqrt{2/\Pi}\ (\sigma_1 - \sigma_2) \quad (3)$$

$$V(x) = \left(1 - \frac{2}{\Pi}\right)(\sigma_2 - \sigma_1)^2 + \sigma_1\sigma_2 \quad (4)$$

Այստեղ ունենք երկու անհայտով երկու հավասարում, որից կարող ենք դուրս բերել հետևյալ հավասարումը՝

$$\sigma_1^2 + b\sigma_1 + c = 0$$

որտեղ՝ $b = \frac{\left(E(x)-\mu\right)}{\sqrt{2/\Pi}}$ և $c = -\left[\left(1 - \frac{\Pi}{2}\right)(E(x)-\mu)^2 + v(x)\right]$ (5)

Լուծելով (5) քառակուսային հավասարումը՝ գտնում ենք $\sigma_1$-ի արժեքը և տեղադրելով (3) հավասարման մեջ՝ գտնում ենք $\sigma_2$-ի արժեքը: Փաստորեն, լուծելով (3 և 4) հավասարումների համակարգը, ստանում ենք երկու-կտոր նորմալ բաշխման երկու անհայտ պարամետրերը՝ $\sigma_1$ և $\sigma_2$:

[1] *Տես՝ "Continuous Univariate Distribution" by Johnson, Kotz and Balakrishnan (1994). Vol 1. page 173.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
6.98 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 140:

*© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2002*